

ՆՃՍԱՐ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԵՉ ԹՐՔԱԿԱՆ ՆՈՐ ՔԱՐՈՉԱՐՇԱԻ

Լիբանանի մեջ թրքական դեսպանատունը վերջին շաբթուան ընթացքին ձեռնարկած է հակահայ քարոզարշավը:

«Սաֆիր» օրաթերթին մեջ թրքական դեսպանատան հրատարակած հաղորդագրությունն քանի մը օր էսօր՝ 1 Մայիսին «Ալ Լիուս» թերթին մեջ հրատարակուեցաւ նորէն պատմական խեղաթիւրումներով լեցուն թրքական դեսպանատան հաղորդագրութիւնը, իսկ 3 Մայիսին լոյս տեսաւ, դարձեալ դեսպանատան կողմէ, հաղորդագրութիւն մը՝ Հայկական Յեղասպանութեան իրողութիւնը խեղաթիւրող եւ այս անգամ «Ալ Տիար» օրաթերթի սիւնակներով: Ըստ երեւոյթին, խեղաթիւրումներու այս քարոզարշավը յառաջիկայ օրերուն ընթացքին կրնայ կրկնուիլ նաեւ այլ թերթերու մէջ, տրուած ըլլալով որ 24 Ապրիլին Հ.Յ.Դ. Տեղեկատու Գրասենեակը լիբանանեան մամուլին լոյց յօդուածներու, հարցազրոյցներու եւ այլ գրութիւններու շարք մը: Այս աշխատանքին պուրակները հեռուտեալի երեք կայաններ, Տեղեկատու Գրասենեակին հետ գործակցաբար, կազմակերպեցին հարցազրոյցներ՝ Հայկական Յեղասպանութեան եւ Հայ Դատին առնչուող: Գրաւոր եւ բանաւոր մամուլի ձեւերով, Հայ Դատի ի նպաստ կատարուած այս քարոզչութիւնը, բնական է որ անհանգստացնէր թուրք եւ թրքական դեսպանատունը:

Այսպիսի հերքումներու եւ խեղաթիւրումներու երեւոյթը շատոնց առկայ է այլ հայկական գաղութներու մէջ, սակայն վարմանային այն է, որ թրքական դեսպանատունը այսպիսի ջոհաբեր յարձակումի մը կը ձեռնարկէ այնպիսի երկրի մը մէջ, որուն պետութիւնն ու ժողովուրդը արդէն ծանօթ են Հայկական Յեղասպանութեան բոլոր տուեալներուն եւ ծայրերուն, Հայ Դատի պահանջատիրական երթի բոլոր հանգրուաններուն եւ իր կեցնածքով ու արտայայտութեամբ մի՛շտ ալ կողմակից ու պորպիզ է Հայկական Հարցի ամբողջական լուծման եւ հայութեան արդար իրաւունքներու վերատիրացման:

Թրքական դեսպանատան փորձերը պարզիւն են մանաւանդ այն առումով, որ տուեալ բոլոր յօդուածներու կողքին թերթերու խմբագիրներու կողմէ կան հայաստանաւոր հաստատումներ եւ խմբագրական նօթք, որոնք մէկ ձեւով կասկածի տակ կ'առնուի Հայկական Յեղասպանութեան իրողութիւնը, այլ բնականապէս կայ ամբողջական հասկացողութիւն Հայկական Հարցին նկատմամբ:

«Ալ Լիուս» օրաթերթին մէջ լոյս տեսած գրութիւնը կը պատկանի լիբանանացի մտաւորական եւ դասախօս տոքթ. Զիհաւ Նամանի, որ ան դրուատիքով կ'արտայայտուի հայ ժողովուրդի ազնուական նկարագրին, հայ եւ արաբ ժողովուրդներու բարեկամութեան, ինչպէս նաեւ կ'անդրադառնայ Հայկական Յեղասպանութեան իրողութեան, թուելով պատմական այն հանգրուանները, որոնց ընթացքին գործադրուեցաւ Հայկական Յեղասպանութիւնը:

Թրքական դեսպանատունը կը փորձէ հերքել այդ բոլորը եւ ժամանակակից դարձած փաստարկներով հանրային կարծիքը ուղղութիւնը կ'ուզէ շեղեցնել, հիմնադրելով իր տեսակետը այն շինծու տրամաբանութեամբ, որ հայերը պատերազմին ընթացքին կողմ ճշդեցին եւ ենթարկուեցան վնասներու:

Աւելի հետաքրքրական է «Տիար» օրաթերթին մէջ կատարած ենթադրեալ հիմնաւորումներու շարքը, որ կը պատասխանուի «Տիար» օրաթերթի կողմէ Հայ Դատի յանձնախումբին հետ կատարուած հարցազրոյցին մէջ տեղ գտած մտածումներուն ու կարծիքներուն: Խեղաթիւրման իր ճիգին մէջ, թուրքը ինքիինքն ամուրթեան կը մատնէ, երբ կ'ըսէ թէ միայն 15 պետութիւններ ճանչցած են Հայկական Յեղասպանութիւնը: Դարձեալ կը փորձէ Յեղասպանութեան ցոյցերը թուրքը այսպիսիքով, եւ չի վարանի «ստասխոսութիւն» որակելու հարցազրոյցին մէջ տեղ գտած հիմնաւորումները եւ բանասիրականներու տարափոխ մը կը փորձէ թրքավայել դիւանագիտութեան նմոյշ մը տալ արդէն իսկ լիբանանցիին ծանօթ իր վաղեմի նկարագրին:

Հ.Յ.Դ. Տեղեկատու Գրասենեակը այս բոլոր հաղորդագրութիւններուն եւ գաղտնի պատասխան-խեղաթիւրումներուն մէջ կը տեսնէ իր առաքելութեան յարողութիւնը: Փաստօրէն անհանգիստ է թուրք դիւանագիտական ներկայացուցչութիւնը: Թրքական դեսպանատան այս քայլը եթէ նոր գործադրութիւն մըն է իրեն, կասկած պէտք չէ ունենայ, որ ի յառաջագունէ այդ մէկը դատապարտուած է ճախողութեան: Վստահաբար կը ստանայ նաեւ հատու պատասխան ոչ միայն հայութեան կողմէ, այլ հայութեան արդար իրաւունքներու պօրափոխ արաբ բարեկամներէ:

Մինչ այդ մենք կը գտնուինք Հայ Դատի քարոզչութիւնը ընդարձակելու բազմաձև կատարող իրքերու վրայ, ինչ փոյթ որ բազմաձև թրքական հակադարձութիւնները, որոնք աւելիով պիտի բացայայտեն թուրքի իսկական դիւանագիտ. ու ցեղասպան էութիւնը:

3. ՀԱՒԹԵԱՆ

ՄԵՆԻՍՄԱՆԱԿԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԳՈՈԿ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՅ ՆԱԽԱՐԱՐ ՄԵՐ ԿԸ ԿԱՏԱՐԷ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ներքին գործոց նախարար Էլիաս Մեր երէկ ըսաւ, որ կը սխալին բոլոր անոնք, որոնք կը կարծեն, թէ ռեւի անձնաւորութեան մը թեկնածութիւնը ներկայացնելով՝ կրնան հարցական դարձնել ներքին գործոց նախարարութեան հաւատարմութիւնը, «ո՛չ ալ կրնան որոշ կարգախօսներով՝ զիս մղել՝ միջամուխ ըլլալու ընտրապայքարի մը, որուն խնդրոյ առարկայ աթոռ իմս չէ, իմ իրաւունքս չէ, մանաւանդ որ Մուխայէր ընտանիքը յայտարարեց իր անդամներէն մէկուն թեկնածութիւնը՝ ամբողջացնելու համար հանգուցեալ երեսփոխան Ալպէր Մուխայէրի պաշտօնավարութեան շրջանը»: Մեր ընդգծեց, որ Մերի բնակիչները վերջին ընտրութիւններուն վստահութիւն յայտնած էին հանգուցեալ երեսփոխանին նկատմամբ:

Ներքին, գործոց նախարարը նաեւ հաւատեց, որ ինք պիտի չտարուի եւ մասնակից պիտի չդառնայ պուտ անձնակազմին ստացող այս ընտրապայքարին, եւ կոչ ուղղեց բոլորին՝ վեր մնալու անձնական հաշիւներէն ու շահերէն, ինչպէս նաեւ՝ վզայնութիւններէն:

ԵՐԵՎՈՒՆԱՆԵՐ ՍՈՒԱՅՏ ԵՒ ՖՐԱՆՏԷ ԿԸ ԸՆԵՐԵՆ

Միւս կողմէ, երեսփոխաններ Ֆարէս Մուսայտ եւ Սամիր Ֆրանսիէ (երկուքն ալ Քըրնիթ Շահունի հանդիպումի անդամներ), երէկ հաղորդագրութեամբ մը հերքեցին «Տիար» օրաթերթին մէջ լոյս տեսած այն լուրը, թէ իրենք առաջարկած են Մեթնի լոյս ուղղափառներու երեսփոխանական աթոռին թեկնածու ներկայացրնել Սամիր Ապտէլ Մալաբը, որպէս միջին լուծում եւ համախոհական թեկնածու:

ԿՈՒՉՈՒԻ

- Երկաթագործ մը կարիք ունի երիտասարդ (18ճ 30) եւ փորձառու գործաւորի մը: Հեռ. 01-487518:
- Գրիգոր Գոճայեանի մահուան առիթով, փոխան ծաղկեպսակի «Արագած» պկուսքի՝
 - Սարգիս Յարութեան 15,000 լ. ո.
 - Մորիս Ճապրեան 10,000 լ. ո.
 - Ժան Ճանսեան 10,000 լ. ո.
 - Յովհաննէս Համոյեան 10,000 լ. ո.

Հ.Յ.Դ. Լ.Ե.Մ. ԴՐՕՇԱԿ ՄԱՍՆԱՅԻՂ

ՀՈՒՇԻ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ 10 ԱՄԵԱԿ

ԲԱՆԱԽՕՄ՝ ԸՆԿ. ՅԱԿՈՒԲ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

Տեղի կ'ունենայ Գործըջարքի, 8 Մայիս 2002, երեկոյեան ժամը 8:00ին, «Յակոբ Տեր Մելքոնեան» բաղնիքային սրահի մէջ:

«ԱԶԳԱԿ»Ի ՖՈՆԾԻՆ

- Իր ամուսնոյն՝ ՅԱԿՈՒԲ ԱՐԱՖԵԱՆԻ մահուան առիթով,
 - Տիկն Զապէլ Սարաֆեան 100,000 լ. ո.

ՇՆՈՐԸԱԿԱԼԻՔ

Տիկն Զապէլ Սարաֆեան, տրեւ տիկն Յակոբ եւ Անի Եփրեմեան, տրեւ տիկն Երուանդ եւ Սիլվա Եփրեմեան եւ տրեւ տիկն Բաֆֆի եւ Նորա Թաշճեան շնորհակալութիւն կը յայտնեն բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով, նուիրատուութեամբ եւ հեռագրով մասնակից եղան իրենց ամուսնոյն, հոր եւ հարազատին՝ ՅԱԿՈՒԲ ԱՐԱՖԵԱՆԻ մահուան սուգին:

ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

- Իր ամուսնոյն՝ ՅԱԿՈՒԲ ԱՐԱՖԵԱՆԻ մահուան բառաստուգին առիթով, տիկն Զապէլ Սարաֆեան կը կատարէ հետեւեալ նուիրատուութիւնները.
 - «Զարթոյց» օրաթերթի՝ 50,000 լ. ո.
 - «Արարատ» օրաթերթի՝ 50,000 լ. ո.
 - Հ.Մ.Ս.Ի՞՞՞՝ 100,000 լ. ո.

Ս. ՅՈՎՀԱՆՆՈՒ ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՅԻ
ԴՊՐԱՅ ԴԱՍԻ 66ԱՄԵԱԿԻ ԱՌԻՈՈԿ
Ս. ՊԱՏԱՐԱԳ

Ս. Յովհաննու Կարապետ եկեղեցւոյ դպրաց դասի 66ամեակին առիթով, Ս. եւ Աճմահ պատարագ պիտի մատուցուի Կիրակի, 5 Մայիս 2002ին:

Պիտի պատարագ եւ քարոզ՝
ԳԵՐՇ. Տ. ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆ
(Առաջնորդ Լիբանանի Հայոց թեմի)

Սիրով կը հրակիրուի հաւատացեալ ժողովուրդը ներկայ գտնուելու այս հոգեպարար արարողութեան:

Ս. ՅՈՎՀԱՆՆՈՒ ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՅԻՈՅ
ԴՊՐԱՅ ԴԱՍԻ ԿԱՐՉՈՒԹԻՒՆ

ՀԱՄԵՊ ՀԱՄԵՊ

ՄԱՀԱԶԴ

Տիկն Հելլեն Քեօզկերեան
Տէր եւ տիկն Նազո Քեօզկերեան
Տիար Վարդան Քեօզկերեան
Տիար Լեւոն Քեօզկերեան
Տէր եւ տիկն Վազգէն Մարիա Կարապետեան
Տիկն Անժէլ Մուսկաճեան եւ զաւակունք
Տիկն Ալիս Քեօզկերեան եւ զաւակունք
Տիար Գրիգոր Քեօզկերեան եւ զաւակունք
Տէր եւ տիկն Երուսէֆ Քեօզկերեան եւ զաւակունք
Տէր եւ տիկն Գէորգ Քարսեղեան
Տիար Զարեհ Բարսեղեան
Տէր եւ տիկն Ռիչըրտ Լուսին Մասրեան
եւ զաւակունք
Տէր եւ տիկն Կարպիս Ռոզին ինչապարարեան
եւ զաւակունք

Տէր եւ տիկն Գրիգոր Արոյեան եւ զաւակունք
եւ Համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, հոր, եղբոր, քեռայրին եւ հարազատին՝

ՃՈՐՃ ԶԵՕՇԿԵՐԵԱՆԻ
(Ծնեալ՝ Հալէպ, 1926ին)

մահը, որ պատահեցաւ Հինգշաբթի, 2 Մայիս 2002ին, կէսօրին:
Յուրաքանչեւ արարողութիւնը կատարուեցաւ Ուրբաթ, 3 Մայիս, կէսօրէ ետք ժամը 1:00ին, Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, Սէյրաֆի, Հալէպ:

- Ներկայս ընդունիլ իբրեւ մահապղ:
- ՍԱՆՕԹ.- Յետ թաղմանական արարողութեան ցաւակցութիւնները կ'ընդունուին եկեղեցւոյ ներքնասրահը:

ՏԵՍԱԿԵՏ

ՄԱԿ ԳԵՐԹԱԿԱՆ ՅԵՂԻՆԱԿԱԶՐԿՈՒՄԸ

Ամէն օր քիչ մը աւելի կը շեշտուի ՄԱԿի նահանջը՝ աշխարհի տարածքին: Մարդոց, յատկապէս ոչ արեւմուտքի ժողովուրդներու մօտ հիասթափութիւնը հետեւեալ կը ծաւալի անոր նկատմամբ: Պետութիւններու եւ ժողովուրդներու միջեւ արդարութեան եւ հաւասարութեան ընթացքը համակարգելու անկրկնելի պարտականութիւնը ստանձնած ՄԱԿ բանիւ եւ գործով կը թերանայ իր առաքելութեան մէջ, մէկը միւսին ետեւէն ճախողութիւններ կ'արձանագրէ, ինչ որ առաջին հերթին կասկած կը սերմանէ իր իսկ հոլութեան հանդէպ: Այլապէս ինչպէ՞ս բացատրել ՄԱԿի քննիչ յանձնախումբին ճախողութիւնը՝ Իսրայէլի մէջ: Ինչպէ՞ս ընդունիլ ընդհանուր քարտուղար Քոֆի Անանի որոշումը, որուն համաձայն՝ տուն կանչուեցաւ այն անդինը, որ սկսբունքով պիտի գործուէր Ժենիւն՝ ստուգելու համար, թէ հոն քարոզ կատարուած է իսրայէլեան ներխուժումներուն ընթացքին, կամ ոչ: Անան յայտարարեց, թէ կարելի չէր ան համաձայնութիւն մը գոյացնել Թէլ Աւիւի հետ, որովհետեւ անոր հաստատած պայմանները անհնար դարձուցին առաքելութեան յաջողութիւնը:

ՄԱԿ այս տկար կեցուածքը նահանջ է անկասկած եւ սեւ արատ վրայ՝ «կը կնքէ» անոր պատմութեան էջերուն վրայ:

Ինչ կը նշանակէ «կարելի չէր ան համաձայնութիւն գոյացնել Թէլ Աւիւի հետ»: Ո՞ր մնացին ՄԱԿ գերակայութիւնը, արդարութիւնը պարտադրելու իր հանգամանքը, իրաւունքը: Մտահոգիչ այս կեցուածքը մեկ կը մղէ հարց տալու նաեւ հետեւեալը. արդեօ՞ք ՄԱԿ եւս կը վարէ փրօ իսրայէլեան քաղաքականութիւնը, թէ իրապէս տկար է ան ու այլ ընտրանք չունէր բացի տեղի տալէ: Երկու պարագաներուն ալ խոցելի է ան եւ այս ընթացքով վստահութիւն չի կրնար ներշնչել աշխարհի ժողովուրդներուն: Հետեւաբար նաեւ մտք է անոր ապագան: Որովհետեւ ժողովուրդները, յատկապէս Միջին Արեւելքի ժողովուրդները, այսուհետեւ չեն հաւատար անոր որոշումներուն, իսկ անպատիժ մնացող կողմերը պիտի քաջալերուին եւ աւելի սանձարձակ պիտի դառնան՝ ի տես անոր անկարողութեան, թոյլ կեցուածքին, ու ձեռով մը անիշխանութիւն պիտի տիրէ աշխարհի տարածքին, ինչ որ վստահաբար անյարիր է միջազգային ներկայ քաղաքական մտածողութեան: Ուրեմն, ՄԱԿ կը մնայ պարտադրել ինքիինքն, սեղմել գօտին, տէր կանգնիլ իր կոչումին, իրաւունքին, առաքելութեան, այլապէս ան ժամանակի ընթացքին պիտի նկատուի լուսանցքային, առ այդ անոր գոյութիւնը՝ անիմաստ:

Մինչ այդ, սակայն, հետաքննութեան խմբակի առաքելութեան խափանումը՝ Իսրայէլի կողմէ, չի կրնար ծածկել անշուշտ այն ճշմարտութիւնը, որուն ակնհասեան եղաւ ամբողջ աշխարհը՝ պատկերապիտի միջազգային կայաններէն: Ինչ որ տեղի ունեցաւ Ժենիւի մէջ՝ կատարեալ ու անհերքելի ջարդ է, պոր գործեց իսրայէլեան բանակը: Իսրայէլ որքան ալ փորձէ ծածկել իր գործադրած ոճրային արարքը, ջարդի ենթարկուած ժողովուրդը՝ պաղեստինցիներ, երբեք չի ստանայ սարսափելի դէպքերը, կը մնայ պահանջատէր ու վրէժխնդիր: Եւ այն ժողովուրդը, որ գիտակից է իր նահատակներուն արեան կանչին, կը տանի վերջնական յարթանակը:

ՀՐԱՉ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

ՄԱՀԱԶԴ

Տիկն Նազելի Եարտմեան
Տէր եւ տիկն Հայկազ եւ Լենա Եարտմեան
եւ զաւակները՝ Հրաչ եւ Քարլա
Տիար Ծօնի Եարտմեան եւ զաւակը՝ Հրայր
Տէր եւ տիկն Միշէլ եւ Նինա Դաւիթեան եւ զաւակը՝ Անթուան
եւ զաւակունք

Տէր եւ տիկն Յակոբ եւ Էլիզ Գօճատէլեան
եւ զաւակունք

Տէր եւ տիկն Ռուբէն Եարտմեան եւ ընտանիք
Տիկն Աննէ Զարեան եւ զաւակունք
Տէր եւ տիկն Ջուլէն Մազակեան եւ զաւակունք
Թորոսեան ընտանիք
Գասարեան ընտանիք
Գարրիէլեան ընտանիք
եւ Համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, հոր, մեծ հոր, աներին, հորեղբոր եւ հարազատին՝

ԳԱՐԵԳԻՆ ԵԱՐՏՄԵԱՆԻ
(Ծնեալ՝ Եոզկաթ, 1913ին)

մահը, որ պատահեցաւ Հինգշաբթի, 2 Մայիս 2002ին առաւօտեան ժամը 8:00ին, իր բնակարանին մէջ:
Յուրաքանչեւ արարողութեան պաշտամունքը պիտի կատարուի Երաթ, 4 Մայիս, կէսօրէ առաջ ժամը 11:00ին, էջրեֆիէի Հայ Աւետ. եկեղեցւոյ մէջ, ուրպէս հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի եւ ամփոփուի Քըրն Երաթի Հայ Աւետ. գերեզմանատան ընտանեկան դամբարանին մէջ:
●Ներկայս ընդունիլ իբրեւ մահապղ:
●Յաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալի պակին՝ Հայկազ Եարտմեանի բնակարանը, Մար Միայել, «Ապաճեան» շէնք, 6րդ յարկ, Երաթ 4, Կիրակի 5 եւ Երկուշաբթի 6 Մայիսին:
●Կը խնդրուի փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւնները կատարել Էջրեֆիէի Հայ Աւետ. եկեղեցւոյ:

ՄԱՀԱԶԴ

Տիկն Միլիկ Պապայեան
Օր. Վիքթորիա Պապայեան
Տիկն Վերգին Պապայեան եւ դուստրը՝ Ռոզին
Տէր եւ տիկն Կիրակոս Պապայեան
Տէր եւ տիկն Տիգրան Պապայեան եւ զաւակունք
Տէր եւ տիկն Ալեքս Պապայեան եւ զաւակունք
Տէր եւ տիկն Կարօ Թեքեան եւ զաւակունք
եւ Համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, հոր, եղբոր, հորեղբոր եւ հարազատին՝

ՏՈՔԹ. ԺԱԸ ՆՈՒՊԱՐ ՊԱԳԱԼԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Զորեղջարթի, 1 Մայիս 2002ին, կէսօրէ ետք, Յունական հիւանդանոցին մէջ:
Յուրաքանչեւ արարողութեան արարողութիւնը կատարուեցաւ Հինգշաբթի, 2 Մայիս 2002ին, կէսօրէ ետք ժամը 4:00ին էջրեֆիէի Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ, ուրպէս հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Քըրն Երաթի Հայկազի գերեզմանատունը:
●Ներկայս ընդունիլ իբրեւ մահապղ:
●Յաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալի բնակարանը, Մարի, Մար Միայել եկեղեցւոյ դիմաց, «Ուսք Մարունի» շէնք, 4րդ յարկ, Ուրբաթ 3, Երաթ 4 եւ Կիրակի 5 Մայիսին:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՈՐԻՉՈՆՆԵՐ ՇԻՐԱՔ - ԼԸ ՓԷՆ ՄՐՑՈՒՄԷՆ ԱՆԴԻՆ

Ֆրանսայի, ինչպես նաև քաղաքակիրթ ու ժողովրդավար աշխարհի պատմության մեջ իւրաքանչիւր դեպք մը պիտի արձանագրուի վաղը կիրակի: Ֆրանսացի բուհարկողները բուհատուփ պիտի ուղղուին ՄԵՐԺՈՒՄԷՆ բուհ տալու, եւ ոչ թէ անկայման նոր նախագահ մը ընտրելու կամքով: Նախագահ Ժար Շիրաքի վերընտրութիւնը ապահովելու աւելի, անոնք պիտի բուհարկեն Ժան Մարի Լը Փէնի նախագահական պալատ մուտքը արգիլելու նպատակով:

Նախագահական ընտրութեանց առաջին հանգրուանին, 21 Ապրիլի գիշերը ֆրանսացիք, ու անոնց հետ ամբողջ աշխարհը մեծ ցնցում ապրեցան, երբ ծայրայեղ աջակողմեան Ժան Մարի Լը Փէն յաջողեցաւ նախագահութեան մրցումէն հետոյ ընկերակցական կուսակցութեան ղեկավար Լիոնէլ Ժոսփէնը: Ֆրանսական մամուլը շոնորալի ու ահագանգային խորագիրներով արձագանգեց այս արդիւնքին: Բոլոր անոնք, որոնք չէին մասնակցած բուհարկութեան, փաստանք արտայայտեցին, որովհետեւ անդրադարձան, թէ չքուէարկելն ալ բաժին ունէր ծայրայեղ աջակողմեան ղեկավարին ձեռք բերած արդիւնքին մէջ:

Կարգ մը դեմեր փութացին 21 Ապրիլի բուհարկութեանց արդիւնքները որակել իրեն ընկերակցականներու պարտութիւնը: Ճիշդ է. եթէ պահ մը վերջի շէնք 80 կականներու այն օրերը, երբ Ֆրանսուա Միթերան, իբրեւ Ընկերակցական կուսակցութեան ղեկավարը, ջախջախիչ յարթանակով մը էլիզաբէտ Գործած էր ու միաժամանակ իր կուսակցութեան համար ապահոված խորհրդարանի արտոններուն մեծամասնութիւնը, կարելի է ձայնակցիլ այն մեկնաբանութեանց, որ 21 Ապրիլ 2002 ընկերակցականներուն համար սեւ օր մը եղաւ: Սակայն եթէ մեր յիշողութեան կարկիները թիչ մը անելի լայն բանակը ու աչքի առջեւ ունենանք ժողովրդավար Ֆրանսայի պատմութիւնը, մարդկային իրաւունքներու դրօշակիրի անոր վատակն ու արդար հիմունքներու վրայ մարդկային ընկերակցական մը կերտելու անոր երբը կրնանք անվարան ըսել, թէ այս շաբաթավերջի ընտրութիւններուն, նոյնիմանք Ֆրանսան է պարտութիւն պիտի արձանագրէ, հոգ չէ թէ այժմէն իսկ յստակ է, որ Շիրաք յարթական դուրս պիտի գայ վերջին մրցումէն, ապահովելով բուհարկութեան շուրջ 80 առ հարիւրը:

Ֆրանսայի ինչպէս կ'ափսոսան ու գայրացած են ի տես Լը Փէնի ձեռք բերած արդիւնքին:

Որովհետեւ Լը Փէն կը ներկայացնէ ծայրայեղ աջակողմեան ու ազգայնամոլ հոսանք մը, որ ըստ ամենայնի ժամանակակից է ոչ միայն Ֆրանսայի, այլ նաեւ՝ ամբողջ եւրոպայի նորագոյն պատմութեան չափանիշներով: Ոչ-ֆրանսական ձեռագրով ֆրանսացիներուն հանդէպ անոր վանողական տրամադրութիւնները (ան կ'ուզէ Ֆրանսայէն հեռացնել Միշլին Արեւելիքէն, Ափրիկէէն ու Ասիայէն Ֆրանսա հաստատուած բոլոր «օտարականները»), ապա նաեւ Ֆրանսան եւրոպական միացեալ տնտեսական դրութեան (ԵՈՒԲՕ) շուկայէն դուրս բերելու անոր յայտարարութիւնները կը կազմեն գէթ երկու գլխաւոր խորագիրներ, որոնք թեկնածու Լը Փէնի նկատմամբ վանողական տրամադրութիւններ կը ստեղծեն թէ՛ Ֆրանսայի եւ թէ՛ եւրոպայի տարածքին: Հետեւաբար, 21րդ դար մուտք կոխած ֆրանսացիները հիմա իրենք զիրենք դեմ յանդիման կը գտնեն մէկ ընտրանքի փակել Լը Փէնի նամակը, հոգ չէ թէ անկի պիտի ըլլայ սպառած Շիրաքը դարձեալ նախագահական աթոռին վրայ պահելու գնով:

Կ'արժէ նաեւ հարց տալ, թէ ֆրանսացիք ինչի՞ կը պարտին 21 Ապրիլի բուհարկութեանց արդիւնքը:

Ամէն բանէ աւելի, 21 Ապրիլը բողոքներ ըրալ իրականութիւն մը, որ նախ եւ առաջ կը բարգամանուի իշխող կուսակցութեանց նկատմամբ բուհարկողներուն մերժողական տրամադրութեամբ: Քուէարկողներուն ընդհանուր համեմատութիւնը հազիւ 70 առ հարիւր էր, իսկ «յարթական» Շիրաքը ապահովեց բուհարկութեան հազիւ 20 առ հարիւրը (ի դէպ, նման երեւոյթ միայն Ֆրանսայի յատուկ չէ, որովհետեւ Միացեալ Նահանգներու նախագահական վերջին ընտրութիւններուն ալ բուհարկողները անբաւարարութեան աննախընթաց տրամադրութեամբ ու բացայայտ անտարբերութեամբ վճռեցին Պուշ - Քլինթոնը մրցումին նակատագիրը):

Իշխանութեան մասնակից կուսակցութեանց Շիրաքի ու ընկերակցականներուն «կենսակցութիւնը», որ կարճատեւ ընդմիջումներով գոյատեւեց վերջին աւելի քան 15 տարիներուն, կը բուհարկուի միայն թէ՛ այժմու նախագահին եւ թէ՛ Միթերանի ժառանգորդներուն դրամագլուխները: Իշխանութեան մասնակցելով, ընկերակցականները ստիպուեցան մեծ զիջումներ կատարել ընկերային ու տնտեսական այն սկզբունքներէն ու քաղաքական վարքագիծէն, որ Ֆրանսան կը գատորոշէր դրամատիրական տրամաբանութեան

գերի դարձող աշխարհին մէջ, զարգացում մը, որ այսօր նարտարարութեան երկիրները դրած է խոր մտահոգութեամբ դիտուող համաշխարհայնացումի նամբուն վրայ: Միթերան ու անոր Ընկերակցական կուսակցութիւնը որդեգրած էին երկիրի հարստութեանց բաշխումը պետական որոշ հակակշիռի տակ պահելու քաղաքականութիւն մը, որ իր կարգ մը անպատեհութիւններով հանդերձ, արդի աշխարհին մէջ ամէնէն տրամաբանական ու հաւասարակշռուած ընկերային տնտեսական գոյավիճակը կը տրամադրէր ժողովուրդին մեծագոյն մասին: Յետոյ, ընկերակցականները որոշ հոյ կորսնցուցին ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ ըլլալու իրենց հանգամանքին պատճառով (առանց մոռնալու կարգ մը նախարարներու գայթակղելի գործունէութիւնները, որոնք օրին ցնցեցին Ֆրանսան ու Ընկերակցական կուսակցութիւնը), որովհետեւ իշխանութիւն կոչուած պտուղը ունի այնպիսի հրապոյրներ, որոնց դիմադրելու համար, 21րդ դարը կերտողը կը կարօտի 19րդ դարու գաղափարական մարքակրօնութեան ու անոր արդիականացման: Ժոսփէն, որ Միթերանի ընտրեալն էր եւ կը վայելէր անոր արժանաւոր ժառանգորդը ըլլալու, ինչպէս նաեւ քաղաքական նառաջայրոյ միտքով օժտուած ղեկավարի մը վարկն ու դիրքը, փաստօրէն չյաջողեցաւ իր առաքելութեան մէջ ու որոշեց քաշուիլ քաղաքական բեմէն:

Շիրաքի տը-լօյիւնս դրամագլուխները, իրենց կարգին, վերջին տարիներուն մաշումէ մաշում գացին, նախ՝ Ֆրանսան ընկերակցականացումէ հետո պահելու անոր գաղափարական պայքարին (աւելորդ չենք նկատել շէշտել, թէ ընկերակցականացում չի նշանակեր համայնավարացում, փաստ ուր Ֆրանսայի Համայնավար կուսակցութիւնը գրեթէ ամբողջական սնանկութեան մատուցած է ու այսօր Ժոսփէն օրերը կը յիշուի իբրեւ հեռուոր անցեալին պատկանող աղօտած պատկեր), ապա նաեւ՝ իշխանութեան մակարդակին վրայ ի յայտ եկած փոստիւթեան հետեւանքով (Շիրաքի իշխանութեան վերջին տարիներուն ի յայտ եկան կաշառակերութեան ու պաշտօններու չարաշահման մէկէ աւելի գայթակղութիւններ, որոնք բնականաբար բարիք պիտի չբերէին ամէնէն լայն ժողովրդականութիւնը վայելող իշխանաւորին անգամ):

Եւ հիմա՝ ի՞նչ:

5 Մայիսի ընտրութեանց արդիւնքը կը բուհարկուի ըլլալ: Ինչպէս նշեցինք, ֆրանսացիք չարեաց փոքրագոյնը ընտրելու, այսինքն Լը Փէնն ու անոր վարդապետութիւնը մերժելու նպատակով պիտի ուղղուին բուհատուփ եւ այնպէս անժողովրդական Շիրաքը պիտի վերադարձնեն էլիզաբէ:

Նախագահական ընտրութիւններէն անցիլին, 21 Ապրիլը կրնայ դարձակետ մը ըլլալ (ու պէ տը է ըլլայ) խորհրդարանական յառաջիկայ ընտրութիւններուն իմաստով: Ֆրանսայի յառաջիկայ խորհրդարանին ստանալիք պատկերը իր ներգործութիւնը պիտի ունենայ ոչ միայն նոյնիմանք Ֆրանսայի դիմագիծին վերաշտակացման, այլ նաեւ՝ ամբողջ եւրոպայի վարկին վերականգնումի նպատակով, նկատի առած Ֆրանսայի առաջնորդողի դերն ու առաքելութիւնը նորագոյն պատմութեան կերտումին մէջ:

Հաւանաբար ժամանակամիջոցը շատ նեղ է, որպէսզի Ընկերակցական կուսակցութիւնը կարենայ Միթերանի տարողութեամբ նոր ղեկավար մը հրապարակ նետել ու փորձել ոչ միայն ժոսփէնի օրով կորսնուած ենթահողը վերականգնել, այլ նաեւ երկիրը վերադարձնել իր գործնապաշտ գաղափարներուն ոլորտին, որ ընկերային ու տնտեսական աւելի արդար հիմունքներու վրայ գարգացող երկրի մը վիճակը վերահաստատելու դառնայ դրօշակիր սանձարձակ դրամատիրութեան ու համաշխարհայնացումի տանող գործընթացին ընդդիմադրութեան: Ժամանակամիջոցը նոյնքան նեղ է, որպէսզի կեդրոնի ձախ ուժերը եւ վերոյիշեալ գործընթացին ընդդիմադիր այլ հոսանքներ կարենան համակարգում ստեղծել իրենց ծրագիրներուն միջեւ ու երկիրը վերադարձնեն քաղաքական-տնտեսական-ընկերային արդար դրութեան մը հունին, որմէ շեղում արձանագրուած է առաւելաբար արտաքին ազդեցութիւններու պատճառով եւ այդ ընթացքը եղած է ի հետեւս արտադրողական մարդին ողնասիւնը կազմող դասակարգներուն ու խմբաւորումներուն:

Ի՞նչ որ ալ ըլլան ժամանակի գործօնին նպատար կամ անկախ տուեալները, Լը Փէնի 21 Ապրիլեան «յարթականը» կրնայ ըլլալ (ու պէ տը է ըլլայ) ֆրանսացիները իրենց քաղաքական արմատներուն գագացողութեան վերադարձող հանգրուանը:

Այս իմաստով, մեծագոյն ու անկիւնադարձային անակնկալին համար պէտք է սպասել խորհրդարանական ընտրութեանց հանգրուանին:

Ս. ՄԱՆՍԵՐԵՃԵԱՆ

ՆԱԿԱՏԱԿՆԵՐԸ ՏԱԿԱԻՆ ՊԱՏԳԱՍ ՈՒՆԻՆ ՓՈՒՍԱՆՅԵԼԻԸ (ՄԱՅԻՍ 6Ի ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ)



Լիրանանա՛յ երկն սերունդին մօտ շատ յուշեր արթնցնող, իսկ նորին՝ միայն պատմութեան դասագիրքերէն ծանօթ այս յուշարձանը ատենին վեր կը խոյանար կեդրոնական Պէյրուսի Պուրճի հրապարակէն՝ ծանօթ նաեւ Նահատակաց հրապարակ անուանով: Տասնամեակներ շարունակ յուշարձանը անցորդներուն կը փոխանցէր հայրենասիրութեան ու քաջութեան պատգամը լիրանանցի ազգային առաջնորդներուն ու մտաւորականներուն, որոնք Մայիս 1916ին Նահատակուեցան Օսմանեան կախաղանով, մինչ քիչ անդին՝ սուրիական տափաստաններուն մէջ, թուրքը կը շարունակէր գործադրել հայ ժողովուրդը բնաջնջելու ցեղասպանական իր ծրագիրը:

Այսօր ան տակաւին նոյն վիճակով կ'ընթանէ հաճախարանին մէկ անկիւնը՝ սպասելով այն օրուն, որ ինք, վերանստեղծուած ու թարմացած, պիտի վերագտնէ իր արժանի պատուանդանը: Մայիս 6ը՝ Նահատակաց օրը պետական տօն է Լիրանանի մէջ: Սակայն Նահատակներուն պատգամը կարծէք կը խլանայ

զինք չըջապատող պատերուն մէջ: Լիրանանցիին համար Նահատակաց օրը սկսած է վերածուիլ գարնանային պտույտներու եւ ընկերային հանդիպումներու առիթի՝ մոռացութեան մատնելով օրուան խորհուրդը: Նահատակներուն յիշատակը պէտք է արժանանայ իրաւ յարգանքի: Պ. Փ.

Բարձր հովանաւորութեամբ եւ նախագահութեամբ
Ամենապատիւ եւ Գերերջանիկ

ՏԵՐ ՆԵՐՍԵՍ ՊԵՏՐՈՍ ԺԹ.
Կաթողիկոս պատրիարքի կաթողիկէ հայոց

ՄԵԾԱՐԱՆՔԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ
Վաստակաւոր Ընկերային Ծառայող

ՏԻԿԻՆ ԱՆԻ ԳԱԼՈՒՄՏԻ

«ՎԱՄՆ ԵԿԵՂԵՅԻՌՈՑ ԵՒ ԲԱՐԵՍՒՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՆՈՒԹԵԱՆՑ»

ԲԱՀԱՆԱՅԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՈՒՌՈՅ ԽԱԶ
ՇԲԱՆՇԱՆԻՆ ԱՐԺԱՆԱՆԱԼՈՒՆ ԱՌԻԹՈՎ

Երկուշաբթի, 6 Մայիս 2002, Երեկոյեան Ժամը
6:00ին, Ե.Կ.Մ.ի «Արարատեան» սրահին մէջ,
Էշրէֆիէ:

ՇՐԱԲԵՐ

Շ. Բ. Ը. Մ. ՍԵԼԳՈՆԵԱՆ ԿՐԹ. ԴԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ

ԼԻԲԱՆԱՆԻ ՍԱՆՈՒՅ ՄԻՈՒԹԻՒՆ

ԱՒԱՆԴԱԿԱՆ ԸՆԹՐԻՔ

Տեղի կ'ունենայ Ծաբաթ, 11 Մայիս
2002ին, Իսրըն պանդոկ, Ժուլյոյթ Ալ
Մաթըն, Երեկոյեան Ժամը 9:00էն սկսեալ:

Yans CLUB

Vahan yev Marina

Երգչուհիներ

Վահան Արծրունի
Երգչուհիները երգելու մեղաքարներ

Մարինա Յովհաննէսեան
Պարուհի Անուշիկ Կարամանլի

Կիրակի
19 Մայիս

ՅԱԿՈՒ ՏԵՐ ՍԵԼԵՆԵԱՆ ՍՐԱՅ, ԺԱՍԸ 201Ն



**ԳՈՐԾԱԾԵՅԷՔ FUEL CARDԸ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ
ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ**

Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 թիւին:

ՊԵՅՐՈՒԹԻ ՄԷՋ «ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՅ»Ի ԵԼՈՅԹՈՎ ԵՈՐ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ՝ ՍՓԻՒՌԱԶԱՅ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԵՐԳՉԱԽՈՒՄԻՆԵՐՈՒ ՀԻՒՐԱՀԱՄԵՐԳՆԵՐՈՒ

Մանկապատանեկան երգչախումբի մը հրաւէրով մանկապատանեկան այլ երգչախումբի մը հիւրանմուտքը մեր գաղութներուն մէջ յայնքան ալ յաճախաբար կ'երեւոյժ չէ: Այս իմաստով շատ զնահատելի նախաձեռնութիւն մըն էր Համազգայինի «Կարկաչ» մանկապատանեկան երգչախումբին հրաւէրով Բերիտ թեմի Ոստումական խորհուրդի «Մեսրոպ Մաշտոց» մանկապատանեկան երգչախումբին Շարաթ, 27 Ապրիլին, Պեյրոսի մէջ տուած երգացանկ մը: Ազգային-հայրենասիրական - մանկական դասականացած երգերու առընթեր, ներկայացուցան մանկապատանեկան երգչախումբի մը համար համեմատարար նոր «Հայոց բանակ», «Կարմիր կակաչներ», «Քեզ, Դաշնակցութիւն», «Սպարապետ», «Դու Մայրիկի պէս բարի» երգերը, որոնք մեր ընդ մերթ համեմուտեցան անգլերէն «Հորի-փոքի» եւ արաբերէն «Արուսալ քֆուլի», «Այսօր հապիկ Ղանուր» մանկապատանեկան եւ ժողովրդային երգերով մեծ խանդավառութիւն ստեղծելով սրահին մէջ:



«Մեսրոպ Մաշտոց»՝ ելոյթի պահուն:

երգիչները աւելի քան երկու ժամ ներկայացուցին բազմազոյն եւ հարուստ երգացանկ մը: Ազգային-հայրենասիրական - մանկական դասականացած երգերու առընթեր, ներկայացուցան մանկապատանեկան երգչախումբի մը համար համեմատարար նոր «Հայոց բանակ», «Կարմիր կակաչներ», «Քեզ, Դաշնակցութիւն», «Սպարապետ», «Դու Մայրիկի պէս բարի» երգերը, որոնք մեր ընդ մերթ համեմուտեցան անգլերէն «Հորի-փոքի» եւ արաբերէն «Արուսալ քֆուլի», «Այսօր հապիկ Ղանուր» մանկապատանեկան եւ ժողովրդային երգերով մեծ խանդավառութիւն ստեղծելով սրահին մէջ:

Համերգին վերջին երգն էր «Նրազ իմ երկիր հայրենի», զոր միասնաբար երգեցին «Մեսրոպ Մաշտոց»ի եւ «Կարկաչ»ի անդամները: Ամբողջ բեմ մը լեցուն երեխաներու հնչիւններով այս երգը վերածուեցաւ պատգամի՝ հայրենիքին մէջ միասին ելոյթներ տալու հեռանկարը փայտաբան: Արդարեւ, համերգի աւարտին, երբ «Կարկաչ»ի խմբավար Չաբար Քէշիշեան «Կարկաչ»ի կողմէ յուշանուէր մը կը մատուցէր «Մեսրոպ Մաշտոց»ի, յայտնեց Շուշիի «Վարանդա» երգչախումբին փափաքը: Արցախի մէջ հիւրընկալելու «Մեսրոպ Մաշտոց»ի խմբավար Գայիանէ Սիմոնեան - Տէրեան «Կարկաչ»ին փոխանցեց յառաջիկայ ամիսներուն ընթացքին Հայկազի մէջ ելոյթ ունենալու հրաւէր մը:



Չ. Բէշիշեան «Կարկաչ»ի անունով յուշանուէր կը յանձնէ Գայիանէ Սիմոնեան - Տէրեանի:

(Լուսանկարները՝ Պ. ԶԱՐՈՒԿԵԱՆԻ)

կը վայելէր Լիբանանի հայոց թեմի առջնորդ Գեղամ եպս. Խաչերեանի հովանաւորութիւնը:

Գայիանէ Սիմոնեան - Տէրեան խմբավարութեան եւ Սեւան Ներսէսեանի կողմէ դաշնակի ընկերակցութեամբ «Մեսրոպ Մաշտոց»ի փոքրիկ

«ԱԶԳԱԿԸ ԿԵԱՆՔՍ Է»

Ստորեւ կու տանք «Ազգակ»ի ընտանիքին կողմէ Արմեն Ապտալեանի դամբանական խօսքը՝ արտասանուած՝ Յակոբ Սարաֆեանի մահուան առիթով:



«Ամբողջ կեանք մը անցուցի «Ազգակ»ին հետ. չեմ կրնար պատկերացնել, որ օր մը այլեւս պիտի դադրիմ ամէն օր «Ազգակ» երթալէ: Այս թերթը ինծի համար գործ չէ. տագնապ է»:

Ասոնք պրն. Յակոբ Սարաֆեանին բառերն են: «Ազգակ»ի, պրն. Սարաֆեանին, որովհետեւ երբ մէկը յիտուն տարի անընդմէջ եւ հաւատարմօրէն կը ծառայէ հաստատութեան մը եւ այդ ծառայութիւնը կը վերածէ առօրեայ տագնապի, ամէնօրեայ պարտմի, կը նոյնանայ այդ հաստատութեան հետ: Ու այս պարագային կ'ըլլայ «Ազգակ»ի՝ պրն. Սարաֆեանը: «Ազգակ»ի ընտանիքին համար այսուհետեւ բաւական դժուար պիտի ըլլայ թերթի ծանրաբեռնուած առօրեան սկսիլ առանց պրն. Սարաֆեանին քաջաբերական խօսքերուն, աշխարհը դիտելու եւ մարդիկը հասկնալու անոր իւրայատուկ մտացումին, իրեն յատուկ յաճախ սուր, բայց միշտ տեղին ակնարկութիւններուն, սրամտութիւններուն, պարտաճանաչութեան, լաւատեսութեան:

Պրն. Յակոբ Սարաֆեանին ներկայութիւնը «Ազգակ»էն ներս ցուցանիչ էր, ու այդպէս ալ պիտի մնայ, անկողորով կամքի, որ երբեք ծուկի գալու տրամադրութիւն չունէր: Ամէն անգամ որ պիտի երթար հիւանդանոց վիրաբուժական ծանր գործողութեան մը համար, կ'ուռնէր ինքն ինք զգացումը թէ ամէն ինչ լաւ է, պրն. Յակոբը լաւ է, մտահոգիչ բան չկայ ու օրեր ետք պիտի վերադառնայ իր աշխատանքին: Գրասեղանին առջեւ պիտի նստի ու առաջին գործը պիտի ըլլայ ստուգել վիճակահանութեան տոմսերը: Յետո՞յ: Թող վկայեն գործընկերներս: Երիտասարդ աշխատակիցներէն մէկը օր մը այսպէս արտայայտուեցաւ պրն. Յակոբին մասին: «Այս մարդը ուղղակի կը զարմացնէ զիս: Այս ինչ սէր է «Ազգակ»ին հանդէպ: Կարծես այս թերթը իր զաւակն է: Այնքան կը գուրգուրայ անոր վրայ»: Ասիկա վստահ եմ տպաւորութիւնն ու վկայութիւնն է «Ազգակ»ի ընտանի-

քի իւրաքանչիւր անդամին, որովհետեւ պրն. Սարաֆեանին աշխատանքի եռանդը, իր սէրը եւ կապուածութիւնը՝ «Ազգակ»ին, չէին կրնար աննկատ մնալ իր աշխատակիցներուն կողմէ:

Պրն. Սարաֆեանին ներկայութիւնը «Ազգակ»էն ներս նաեւ ցուցանիչ էր, ու այդպէս ալ պիտի մնայ, հաւատարմութեան, որ մնաց նոյն կըստով, բայց տարիներուն հետ վերածուեցաւ ապրելակերպի, հօր ու զաւկի միջեւ բնական յարաբերութեան: Հիւանդանոցը, անկողինին գամուած վիճակին մէջ պրն. Սարաֆեան միայն խօսեցաւ «Ազգակ»ի մասին: «Թերթատէ «Ազգակ»ի էջերը. բոլոր ծանուցումները ձեռքիս գործն են: «Ազգակ»ը սրտանց սիրեցի ու միշտ պիտի սիրեմ», բնաւ:

Պրն. Սարաֆեանին ձգած բացը դեռ երկար ժամանակ պիտի զգանք: Փոխան դասական դարձած «հնարեք զայ վրայ» խօսքին կ'աւարտեմ իր իսկ խօսքերով:

««Ազգակ»ին մէջ ամէն տեսակ աշխատանք կատարեցի: Այս թերթը կեանքս է. «Ազգակ»ին համար որեւէ զոհողութեան պատրաստ եմ»:

ԾԱՂԿԵՓՈՒՆԶԻ ՓՈՒԽԱՐԷՆ ՓՈՒՆԶ ՄԸ ԺՊԻՏ ՅԱԿՈՒ ՍԱՐԱՑԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Զորքերի, 27 Մարտի յետմիջօրէին, անահամար աշխատանքի մը համար «Հորիք» պատկերասփիւռի սփիւտին (Լուս Անճելը) այցելելէ ետք, կը պատրաստուէի ինքնաշարժս ուղղորդելու, երբ «Ասպարէզ» օրաթերթի խումբը մը խմբագիրներ ու աշխատակազմի անդամներ, բոլորն ալ նախկին պէյրուսիցիներ, իրենց ուշադրութեամբ իրենց հետ սուրճ առնելու հրահրեցին զիս: Քանի մը խօսք փոխանակելէ ետք, որ անձնակազմի նորագոյն անդամներէն է, ում մեր պէս անտեսեց ինծի:

մէ՛ իսկ ծնած ժպիտը, որ, վստահ եմ, միայն իմս չէ, այլ՝ բոլոր անոնց, որոնք ճանչցան Յակոբը ու գործեցին անոր հետ:

Ընկ. Սաթո, լսեցի՞ր. Յակոբ Սարաֆեանը... կեանքը քեզի... Լիբանանի պատերազմի օրերէն ի վեր ունեմի ծայն չէի լսած. դոյժը ինչ էր պիտի չկարենան չնչեց ունեմի պէս: Խօսակիցս վստահաբար զարմացաւ, որ ինչ ու համար գոյժը դառն ժպիտ մը ուրուագծեց զէմքիս: Քանի մը հարցապատասխանէ ետք, սուրճիս վերջին ումպը կը սուրճի ու ճամբար իջնալու պի աշխատավայրս, մինչ օրաթերթի խումբը մը խմբագիրներ ու աշխատակազմի անդամներ, բոլորն ալ նախկին պէյրուսիցիներ, իրենց ուշադրութեամբ իրենց հետ սուրճ առնելու հրահրեցին զիս: Քանի մը խօսք փոխանակելէ ետք, որ անձնակազմի նորագոյն անդամներէն է, ում մեր պէս անտեսեց ինծի:

...1976ի տար օրերն էին, քաղաքականութեան գինուորական խմբանոտով տար. նոր միացած էի «Ազգակ»ի անձնակազմին, որ օրուան հարկարանքին ենթակայ ստիպուած էր իր կարգին խաղալ «արեւելեան»-ը «արեւմտեան» Պէյրուսի ներքին խաղը: Խմբագրատունն ու տպարանը կը գտնուէին «արեւմտեան» կողմն աշխարհի, իսկ աշխատակազմին մեծ մասը «արեւելեցի» էր: Ընդ տեսնող իւրաքանչիւր թիւի՛ յաջորդ օրը արկածախնդրութիւն մը կը սպասէր անպայման «անցքեր»ը բաց էին, ար-

ԼՈՒՐԵՐ ԶԱԻԱՆՔԷՆ

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՆՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Վրաստանի մէջ տեղական ինքնակառավարման մարմիններու թեկնածուներուն առաջադրուածը շարունակուեցաւ մինչեւ 3 Մայիս:

Ախալքալաքի մէջ ընտրութիւնները տեղի պիտի ունենան 22 ընտրատարածքներու մէջ: Իսկ Նինոծմինտայի մէջ՝ 11: Ախալքալաքի քաղաքային վարչութեան գլխավորը վարչութեան մէջ պիտի ընտրուի 5 հոգի:

Ախալքալաք քաղաքի 7 հոգինոց վարչութեան ընտրութիւնները տեղի պիտի ունենան համամասնական կարգով: Իւրաքանչիւր վարչութեան մէջ պիտի ընտրուի 5 հոգի:

ԹԻՖԼԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՆՍԱԼՔԱՆՔԻ ՄԱՆՍԱԳԻՐ
«Ա. Ինֆո» լրատու գործակալութիւնը կը հարգողէ, որ Թիֆլիսի Պետական համալսարանի Ախալքալաքի մասնաճիւղի կազմաւորման աշխատանքները տակաւին կը շարունակուին:

Այս առիթով Վրաստանի կառավարութիւնը 45 հազար տղար յատկացուած է համալսարանի չէնքին վերանորոգման: սակայն մինչեւ հիմա այդ գումարը տեղ չէ հասած: Մասնաճիւղի տնօրէն Վ. Պերիճէի հաւաստմամբ, գումարը տեղ հասնելուն պէս պիտի սկսին համարակազմային աշխատանքները:

Արգէն սկսած են մասնաճիւղի դիմորդներուն նախապատրաստական դասընթացները, որոնք տեղի կ'ունենան Ախալքալաքի թիւ 3 վրացական դպրոցին մէջ:

Նախատեսուող հայկազմային բանասիրական, իրաւաբանական, օտար լեզուներու, տնտեսագիտական եւ ուսողութեան բաժանմունքներուն մէջ առաջինն են երրորդ կարգերուն դասաւանդումը տեղի պիտի ունենայ հայերէն, վրացերէն եւ ռուսերէն լեզուներով, իսկ Կրկ կարգին՝ միայն վրացերէնով:

Կլոր սեղանին, բազմաթիւ հարցերու կողքին, ինչպէս՝ ելկոտրականութեան մատակարարում, թնօշկներ, ճամբարներ, քննարկուեցաւ նաեւ տեղական ինքնակառավարման մարմիններու ընտրութեան հարցը:

ՇՆՈՐՀԱՎԱԿԱԼՈՒԹԻՆ ԱՄԷՆ ԻՆՉԻ ՀԱՄԱՐ

Մարդոց իսկական արժէքը յաճախ խոտոր կը համեմատի իրենց դիրքին, վիճակին կամ պաշտօնին: Ոմանք կը գտնուին «բարձր» աստիճաններու վրայ եւ «կը փայլին» իրենց ընկերութեան առանցքերը, բայց ըստ էութեան, անարժէք են իրենց մարդ եւ իրենց ընկերութեան անդամ, իսկ ուրիշներ, թէեւ կը գրաւեն համեստ տեղ, բայց արժանի են ամէն յարգանքի եւ երախտագիտութեան: Առաջին տեսակետին շահը կը գերազանցէ հաւաքակառուցութեան ու կը խոչընդոտէ ընկերութեան յաջող երթը, երկրորդը հակապատկերն է. ան ինքզինք կ'ամփոփէ իր ծառայութեան եւ աշխատանքին սահմաններուն մէջ եւ անսակարգ կը ճգնի ի շահ ուրիշին եւ ի խնդիր հաւաքական յաջողութեան:

Այս երկրորդ տեսակէտը կը պատկանէր «Ազգակ»ի անձնակազմին անդամ Յակոբ Սարաֆեանը, որ պայմաններու ընթացքում ունեցաւ համեմատաբար համեստ կեանք, բայց որ կերտեց ուրուսի դիմագիծ իրեն մարդ, ընտանիքի հայր, ազգի գաւազակ, միութեանակազմի յատկապէս իրեն «Ազգակ»ի սին:

Յակոբ Սարաֆեան «Ազգակ»ին ծառայեց 55 տարի նախ իրեն գրաշար, բայց գլխավորաբար իրեն ծանուցումներու պատասխանատու: Ան եղաւ գործ-

ՊԱՐՈՆ ՅԱԿՈՒԸ ՄԵՐ ԿՈՐՈՒՍԸ

Աշխուժ, եռանդուն, գործունեայ պարոն Յակոբը ընկճուած մարդ մըն էր այդ օր, անկարող նոյնիսկ իր միտքերը արտայայտելու: Կատակախօս եւ զուարթաբան մարդու լեզուին վրայ ոչ մէկ յոյսի բառ: Հեռաձայնով հազիւ կը հասկնէր քանի մը նախադասութիւն:

Մորալ չէ մնացած վրաս, դժուար է վիճակս, յոյսս թուլցած: Ծնչառութիւնը կտրամ, քանի մը վայրկեան կը խօսիմ, ու կ'ըմբռնեմ իր վիճակին ծանրութիւնը, անյոյս ըլլալու չափ վախազու:

Ուր մնացին 55 տարիներու «Ազգակ»ի հաւատարմոր ծառային վազքի ու հեղքի տարիները, ժամացոյցի զէմ արշաւը:

Հազիւ երիտասարդութեան սեմին ներս մտած (16 տարեկանին) զբաղած է գրաշարական աշխատանքով: Յաճախ կը պատմէր այդ մասին, թէ ինչպէս մանր, կապարէ շինուած տառերը կը միացնէին ու բառեր, տողեր կը պատրաստէին: Ինք բնութեան արագաշարժութեամբ օժտուած, մրցումը կը շահէր անկասկած միշտ, երբ քանի մը գրաշարներ գործը «թեթեւ» տրամադրութեամբ կատարելու եւ ոգեւորութիւն ստեղծելու համար իրարու ուժը չափելու

Գրական Էջ


ԻՆՔՆԱՏԻՊ «ՀԱՅ» ՄԸ

Իրանի Գիլան նահանգի Անգա-լի նահանգի գիտությունների ակադեմիայի անդամ Բադրեդին Բեհբադի, 1951-ին աշխարհ լույս տեսնելուց հետո, որ հասակ պիտի նետեր հայ ընտանիքներում հարուստների, Բադրեդին Բեհբադիի ընտանիքում ծնվելուց հետո, որ հասակ պիտի նետեր հայ ընտանիքներում հարուստների, Բադրեդին Բեհբադիի ընտանիքում ծնվելուց հետո, որ հասակ պիտի նետեր հայ ընտանիքներում հարուստների...

Տեղեկությունները մինչև Բադրեդին Բեհբադիի մահը հասնում են Արմենիայի Մարտիրոսեանց երկրամասի, 1971 թ. հայ բանաստեղծներու ուշագրաւ գործեր պարսիկ ընթերցողին ներկայացուցած այս եզակի հատորը, որ կը բացուի նույնքան արժեքաւոր ուսումնասիրութեամբ մը (120 էջ), անկասկած, առանձին պիտի բաւեր, որ Ահմադ Նուրիզադէն տեղ գրաւեր հայ ժողովուրդի օտար մեծ բարեկամներու կողմէն: Իսկ եթէ անոր վրայ աւելցընենք Հայկ Նահապետն ու Սասունցի Դաւիթը, Սարգիս Պիծակն ու Մարտիրոս Սարեանը, Կոմիտասն ու Արամ Խաչատրեանը, Անանիա Շիրակացին ու Մխիթար Սեբաստացին, Գրիգոր Նարեկացին եւ Հրաչեայ Աճառեանը պարսիկ ժողովուրդին հետ եղբայրացուցած «Հայաստանի պատմութիւնն ու մշակոյթը» եզակի մեծագործութիւնը, կը կարծենք, յայնժամ ա՛լ ւաւելի կ'ամբողջանայ ամբողջական դիմագիծը այս ամբողջական մարդուն, հայաստանին, մտաւորականին ու հայագետին:

Մանուկ հասակին իր հրշէջ հայրը կորսնցուցած, կենցաղի պարտադրանքի բերումով բանուոր եւ ուսանող դարձած, քսան տարեկանին մամուլի սպարտը մուտք գործած ազնուարիւն այս պարսիկը յաջորդ տարիներուն նաեւ պիտի շարունակէր ապրիլ Թեյլօ տատիկին ստեղծած կախարակաւ մթնոլորտի ազդեցութեան տակ: Բանաստեղծուին Արշի Բաբայեան պիտի հասներ օժանդակութեան եւ ան, հայ գրաւոր խօսքին գաղտնիքներուն հետ մտերմութիւն հաստատելու ետք, պիտի սկսէր պարսկերէնի փոխարինել հայ բանաստեղծներու կարգ մը բնորոշ գործեր:

1973-ին Ահմադ Նուրիզադէի թարգմանութեամբ պարսկերէնով լոյս պիտի տեսնէր իրանահայ բանաստեղծ Գալուստ Խանգեանի «Հրաշալի գորութիւն» ժողովածուն, որուն պիտի յաջորդէր, երկու տարի ետք, նույն հեղինակին «Բարեւ քեզ, մարդ» խորագրեալ թերթագիրքը: Քանի մը տարի անց՝ 1978-ին, Յովհաննէս Թումանյանի չափածոյ եւ արձակ գործերէն կազմուած «Ա՛յ վաթան, ա՛յ



վաթան» անուն հատորը ինքնուրոյն ու յստակ դիմագիծ պիտի տար այս երիտասարդ թարգմանիչ հայագետին, որ Սպահանի Պետական համալսարանի հայագիտական ֆակուլտետին մէջ, եղբորաբարձ Խաթալ Տեր-Գրիգորեանի միջոցով որոշ չափով նաեւ գրաբարին ծանօթանալէ ետք, իր ամբողջ ժամանակը եւ կարելիութիւնները ի սպաս պիտի դնէր հայ գրականութիւնն ու մշակոյթը պարսիկ քերական ժողովուրդին հրամցելու ազնու գործին: Արդիւնքը պիտի ըլլար այն, որ 30 տարուան ընթացքին, Վալերի Պրիւսովներու, Լիւք - Անտրէ Մարսելներու եւ օտար այլ լուսանուն հայագետներու աւանդին վրայ նորոգ գանձեր գումարած այս երիտասարդ հայագետը պիտի թարգմանէր Ե. Չաբեցի, Հր. Քոչարի, Ա. Բակունցի, Նար-Դոսի, Ս. Խանգեանի եւ հայ տասնեակ մը արձակագիրներու ու բանաստեղծներու ստեղծումներէն քաղուած տասներկու գիրքեր, որոնց մէջ ընդհանուրէն պիտի առանձնանային հաստատար երկու հատորներ՝ 1200 էջեր հաշուող «Հարիւր տարի Հայ բանաստեղծութիւն» կորոչական հատորովը եւ 800 ու ւաւելի էջերու վրայ երկարող «Հայաստանի պատմութիւնն ու մշակոյթը» խորագրեալ մեծագործութիւնը: Պետրոս Դուրեանցեան ու Վահան

Պարսկական քնարերգութեան թափանցիկ մտախիտը, վերացման գուարք հոգեվիճակները եւ բրթուներուն վարակիչ շեքմութեան աւանդները հայ դասական քերթողութիւնը բնորոշող հոգեմտաւոր պայծառութեան, բարիին ազնիւ պաշտամունքով, գեղեցիկին համահայկական լուսաշեշտ հնչեղութեամբ հարստացուցած՝ Ահմադ Նուրիզադէ մեզի կը ներկայացնայ այնպիսի մարքամարտ սիրերգութեամբ մը, որ միամտամանակ ե՛ւ պարսկական է, ե՛ւ հայկական, կարճ խօսքով՝ համամարդկային: Բայց Ահմադ Նուրիզադէ անուր տարրէն համեստ ու իրաւ մեր պարսիկ եղբայրը միայն այս բոլորը չէ, ւաւելի է ան, եւ թարգմանիչ ու հայագետ ըլլալէ ետք... նաեւ Հայագիր բանաստեղծն է:

Բովանդակ հայոց պատմութեան մէջ մեզ ծանօթ առաջին փաստն է այն, որ ոչ հայ մի բանաստեղծ ստեղծագործի մետրական լեզուով եւ ստեղծագործի այնպիսի՝ հասկանալի ու լիքերով, այնպիսի՝ շեքմութեամբ ու տարողութեամբ, այնպիսի՝ իսկապէս արտակարգութեամբ, որ նոր վարկ ու նոր չափանիշ կը բերէր որեւէ ազգային, անուանի բանաստեղծի, նոր սահմանում կ'առաջացնէր ազգային բանաստեղծութեան բազմազան ու բազմաձայն տարածքներում: ... Սակայն ինչն ոչ հայ բանաստեղծ, վերջնէ գրիչ, մարդկային եւ պոետական ամենալեզու պահանջները մղուած գրելու հայերէնով, այն էլ գրելու հայոց լեզուի բարգաւաճման, հայապահպանման ու Մասիսների շղթայալեզու մասնի խնդիր ու հրապարակ գալ առանձին հատորով, բացառիկ երեւոյթ է մեր գրականութեան ու մշակոյթի բովանդակ պատմութեան ընթացքում:

Հայ բանաստեղծ է, որուն 1987-էն առօրէն ստորագրած մեքսիկո-պատու աւելի քան 100 բանաստեղծութիւնները՝ «Մասիսը սար չէ», «Բարեւ ձեզ, Հայեր», «Բալլադ սիրոյ եւ տենչանքների մասին» անուն երկարաշունչ պոէմներ ըլլան անոնք, թէ «Վերջին բարեւ, վերջին արեւ», «Ջգո՛ւ՛» կամ «Եթէ վերջինն էս» կարճաշունչ քերթուածներ, կը պատկանին հայ բանաստեղծութեան գանձարանին եւ, այդ իսկ հանգամանքով՝ հայ բանաստեղծի պայծառ քղամիտով կը զարդարեն Ա. Նուրիզադէի ողջ հասակը: Վերջապէս, իր ինքնաստեղծ բանաստեղծութեամբ, պատկերաւոր իւրապատուկ մտածողութեամբ, խօսքին գունագեղ ու թարմ շեքմութեամբ, զգացումներուն վարակիչ գրաւուրէամբ, քերթուածներուն կուռ կանոնով, բարախուն ոճով եւ առիւնը նուրիզադէ հայ ընթերցողին կը ներկայացնայ ոչ միայն իր բնական գիր գրող մը, այլեւ իր բնական մագիծն ու ինքնուրոյն աշխարհը նուաճած ուշագրաւ հայ քնարերգակ մը: Կարդացէ՛ք մեր պարսիկ եղբոր «Բարեւ ձեզ, Հայեր» քերթողագիրքէն քաղուած քովի բանաստեղծութիւնները, եւ պիտի համոզուիք: Ս. ԿԻՐԱՎՈՍԵԱՆ

ՄՃԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԵՐ

ԻՐԱՆՈՒՄ ԿԱՅ ՓՈՔՐԻԿ ՀԱՅԱՍՏԱՆՆՈՒՐԻԶԱԳԷ ԱՆՈՒՆՈՎ



Թէեւ Հայաստանում հիւրընկալուելու ընթացքում իրանցի բանաստեղծ, թարգմանիչ եւ հայագետ Ահմադ Նուրիզադէն բաւական երեւաց հեռուստատեղի-րաններին, սակայն իր գիտակցական կենսի 30 տարիներին իրանում հայ բանաստեղծութեան եւ արձակի, առհասարակ՝ հայ մշակոյթի տարածմանը նուիրած մտորում մասին արժէք ւաւելի մանրամասն տեղեկութիւն տալ ընթերցողին: Նուրիզադէն Հայկական բովանդակութեամբ 12 դիրք է տպագրել պարսկերէն եւ հեղինակել է հայերէն «Բարեւ ձեզ, հայեր» բանաստեղծութիւնների ժողովածուն: Քարմացա՞ք, այո՛, նա Հրաշալի մտածում եւ գրում է հայերէն, եւ ինչպէս այդ ժողովածուի նախաբանում իրանահայ Գրողների Միութեան նախագահ Վարանդի ձեռքով է գրուած՝ «այնպիսի խնդրադատողութիւն ու արտակցութեամբ, որ նոր վարկ ու նոր չափանիշ կը բերէր որեւէ ազգային անուանի բանաստեղծի»:

... Ինձ անուանել եմ Հայ ժողովրդի պարսկախօս գաւակ, Որ արդէն գիտէ Մաշտոցի լեզուով Հայերէն խօսել, խոկալ հայերէն, Հայերէն խնդալ, տիրել հայերէն... Առաւել համահասարակ նրա երեք գրքերը անուանենք, որոնց շնորհիւ իրանցի ընթերցողը ծանօթացաւ հայ գրականութեանն ու պատմութեանը: «100 տարւայ հայ բանաստեղծութիւն» ժողովածուն, որտեղ ամփոփուած է մէկզարեայ հայ բանաստեղծութիւնը՝ Պետրոս Դուրեանից սկսած, մեր բոլոր մեծերով, եւ ուր վերջին բանաստեղծը Արմէն Մարտիրոսեանն է: «Խնձորի րայից», «Աճառեւ» եւ ուրիշ վիպակներ» գիրքը՝ 15 հայ գրողի 20 վիպակով, ներկայացնում է նոյն ժամանակի հայ արձակը: Իսկ «Հայաստանի պատմութիւնն ու մշակոյթը» ծաւալուն աշխատութիւնը իր եօթ բաժնում ներառել է հայոց պատմութիւնը՝ հնագույն ժամանակներից սկսած մինչեւ 1990 թուականը, հայ հին դիցաբանութիւնը, քրիստոնէութեան ընդունումը եւ այլն:

- Ես ոչ թիւստեղծ եմ, ոչ ալ հայ, - մշտապէս շեշտում է իր Հայրենիքում բաւական հանրայայտ եւ դրանով իսկ իր ամէն արածի համար մեծ ուշադրութեան արժանացող բանաստեղծը, - մեծացել եմ Անգլի (հայերս Ենգլի) երբ ատում) քաղաքում՝ հայ ընկերներին հետ, իրենց հետ ուրախացել, իրենց հետ տիրել եմ, եւ որպէս մի մարդ, որ սիրում է մի ազգի, երբ տեսայ լեզուից տիրապետում եմ, թարգմանելու կարողութիւն եւ հեղինակութիւն ունեւ, իմ համբաւից օգտուելից ու սկսեցի հայ մշակոյթն ու գրականութիւնը ներկայացնել: Սկզբում առանձին բանաստեղծութիւններ էի թարգմանում, բայց յետոյ տեսայ, որ ես մեծակ եմ իրանում հայ մշակոյթը տարածում, եւ քանի որ մարդը մահկանացու է, որոշվել ւաւելի հիմնաւոր գրադուել, հիմք ստեղծել, որի վրայ գուցէ թէ կենուի այն մէկը, ով ցանկացայ շարունակել իմ գործը: Իսկ ի՞նչպէս է ընտրում գործերը. ո՞ւմ միջոցով է ծանօթ հայ գրականութեանը: - Մեր գործի մէջ շատ նրբութիւններ կան, որեւէ բանաստեղծութիւն, որ վերածուում է հայ լեզուի արդէն կորցնում է իմ գրաւուրէից: Ես ջանում եմ (Նուրիզադէն ասում էր՝ ջանանում եմ) չաղաւորել

հայ բանաստեղծի գրածի պաթոսը եւ բովանդակութիւնը, հաւատարիմ եմ մնում ոգուն, աշխատում եմ այն վերստեղծել պարսկերէնով: Միամտամանակ, ընտրելու համար յատուկ չափանիշներով եմ առաջնորդում, որ պարսիկ ընթերցողի համար դիրքին լինի ընկալելը, հոգեհարազատ զգայ այդ բանաստեղծութեանը: Առաջին անգամ, երբ 1980 թ. Հայաստան եկայ, ծանօթացայ Սիլվա Կապուտիկեանի, Վարդգէս Պետրոսեանի, Վահագն Դաւթեանի, Գեորգ Էմիին եւ ուրիշների հետ, նրանց գրական ճաշակին եւ մտածելակերպին, այդ շփման առիթն օգնեց ինձ: Բայց այդ, իրանում գրախանութներ կային, ուր հայ գրականութեան նմուշները ստացում էին. ճիշդ է, վերջերս դրանք նուազել են կամ առհասարակ չեն ստացում: Բոլոր բանաստեղծներին, ում գործերը ընտրել եմ թարգմանել եմ, սիրել եմ: Եթէ չկարողանամ հոգեկան կապ հաստատել բանաստեղծութեան կամ բանաստեղծի հետ՝ չեմ թարգմանի: Եթէ ինձ չգրաւի, ընթերցողին էլ չի գրաւի: Միշտ ասել եմ, որ բանաստեղծութիւնն անհնարին է թարգմանել, բայց երբ պետք է մշակոյթ տարածել, թարգմանում ենք, եւ թարգմանիչը պետք է անպայման բանաստեղծ լինի:

Եթէ ոչ՝ չի կարող բանաստեղծի հոգեկան ապրումները ընկալի, զգալ եւ վերստեղծել, դա կը ստացուի ինչ - որ չիմծու բան: Ահմադ Նուրիզադէի հետ զրոյցը հայ մշակոյթի եւ արուեստի բոլոր ոլորտների մասին էր հետաքրքիր՝ այնքան որ ծանօթ էր ամէն ինչին:

Բողբոց, որ ժամանակակից հայ բանաստեղծների գրքերից կ'ուզեմ շատ ունենալ, բայց դժուարանում է ձեռք բերել, մի բանսիսին հետ (բոլորովին նորերի) ծանօթ է, «... Ինչ որ սիւսէներ են շօշափում մեր սիրելի հայ գրողները (արեւելեան սիրալիրութիւն է՝ այդ սիրելի անընդհատ էր ասում), օրինակի համար՝ որոշները պոռնկագրական խնդիրներ մասին են գրում. նման խնդիրներ ոչ գրական արժէք են ներկայացնում, ոչ էլ արժանի են ներկայացուելու որպէս մէկ ազգի գրականութիւն: Արեւստը, գրականութիւնը յատուկ նպատակ են հետապնդում, որ համամարդկային են»:

Հարցիս պատասխանելով՝ նրբօրէն նկատեց, որ մեր «սիրելի հայ գրողները», չգիտեմ ինչ պատճառներով, պարսկական գրականութիւնը քիչ են թարգմանում. երեւի հեռու են երկրից, նրա մշակութային կենսից կամ լեզուի խնդիր ունեն: Ահմադ Նուրիզադէն Հայաստանում ամէնուր ընդունում էին մեծարանքով եւ մրցանակներ տալիս, օրերս էլ պարգևատրուեցաւ Մովսէս Խորենացու մետալով: Անընդհատ մտահոգուած էր, որ իրեն քաղաքական խօսակցութիւնների մէջ չենք բաժնուցում, ինչն ընդունում ենք ամենայն շնորհակալութեամբ: Թ. Գ. - Իսկ Նուրիզադէն ինքը երախտաբար միշտ Սպահանի հայագիտական ամբիոնի վարիչ խաթալ Տեր-Գրիգորեանին, որից գրաբար է սովորել՝ հաղորդակցուելով իր իսկ խօսքերով՝ «հայոց ոսկեղնիկին»:

ՍԱՐԻԹԱ ԽԱՉԱՏՐԵԱՆ

«Հայաստանի Հանրապետութիւն»

ՄԻՐՈՅ ԵՐԳԵՐ ՆՈՒՐԻԶԱԳԷՆ

ՎԵՐՋԻՆ ԲԱՐԵՒ, ՎԵՐՋԻՆ ԱՐԵՒ
Քո սէրը վերջին, վերջին դուռն էր, Քո աչքերի մէջ վերջին հուրն էր: Վերջին դուռն էլ փակիր ու գնա, Վերջին հուրն էլ մարի ու գնա:

Անարեւ կենսի կայարաններում Մի թափառական ճամբորդ էի ես եւ յանկարծ, յանկարծ վերջին կայանում Հանդիպեցի քեզ: Վերջին ճամբորդին Վերջին կայանում Լքիր ու գնա:

Վերջին բարեւը տուեցի ես քեզ, Վերջին արեւը դու ինձ տուեցիր, Վերջին բարեւը, Վերջին արեւը, Գրկիր ու գնա:

Երբ հասար կենսի վերջին կայանին, Վերջին բարեւը տուեցիր, վերջին, Դո՛ւ՛ վերջին ճամբորդ, Վերջին արեւը տուեցիր թէ քեզ, Վերջին բարեւս,

Վերջին արեւս Յիշիր ու գնա...

ԵՍԷ ՎԵՐՋԻՆ ԵՍ
Եթէ վերջինն ես դու իմ երգերի՝ Յուշարարն եղի՛ր դու իմ վերջերի, Արնաբառ պատմի՛ր սիրոյ ճամբերից՝ Եթէ վերջինն ես դու իմ երգերի:

Քանի վնգում է շղթան ձեռքերի՝ Արեւն հոսքն եղի՛ր, հոսքն արեւն էր, Եթէ վերջինն ես դու իմ երգերի՝ Յուշարարն եղի՛ր դու իմ վերջերի:

Եթէ վերջինն ես դու իմ երգերի՝ Եղի՛ր վեհ յոյսը գալիք արտերի, Հրէ՛ հիմնն եղի՛ր դու ապատութեան՝ Եթէ վերջինն ես դու իմ երգերի:

Եղի՛ր կարօտը դու արդարութեան, Անյազ ծարար՝ անմար ծէգերի, Եթէ վերջինն ես դու իմ երգերի՝ Եղի՛ր վեհ յոյսը գալիք արտերի:

ՏԵՂԵԿԱՏՈՒԹԵԱՆ ԱՐԱԳԱՏԱԳԻՏՈՒԹԻՒՆ


ՀԱՄԱԿԱՐԳԻՉ

ՀԱՄԱՑԱՆՑ

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀ



ՀԱՅԿԱԿԱՆ ՇԱՐԺԱՊԱՏԿԵՐԻ ՀԱՄԱՅՆԱԳԻՏԱՐԱՆ ՀԱՄԱՑԱՆՑԻՆ ՎՐԱՅ



«Տքնալան ճիգերն ետք է միայն, որ մշակույթի հնադարեան օրրան Հայաստանն ու եթեթերորդ արուեստի դեռևս «մուսան» հանդիպեցան վերջապէս»։ Այսպէս կը սկսի հայկական շարժապատկերի ամփոփ պատմական կատարող Սուրեն Յասմիկեանի յօդուածը՝ տեղադրուած հայկական շարժապատկերին նուիրուած www.arm.cinema.am հասցէով կայքին մէջ։

Կայքին զանազան բաժինները հետաքրքրական եւ սպառելի կերպով կը ներկայացնեն հայկական շարժապատկերը՝ Հայաստանի եւ եթեթերորդ արուեստի «մուսան» շարժապատկերի օրերէն մինչեւ մեր օրերը։

Կայքին մէջ յատուկ բաժիններ յատկացուած են հայկական շարժապատկերներու համառօտ պատմականին, ֆիլմի քննադատներու եւ Շարժապատկերի Լրագրողներու Հայկական Միութեան, հայկական ֆիլմերու, բեմադրիչներու, դերասաններու եւ արտադրիչներու։

Անգլերէն եւ ռուսերէն լեզուներով հանրութեան ներկայացող այս կայքին «Films» բաժինը յատուկ շահեկանութիւն ունի։ Այնտեղ տեղադրուած են մասնաւորապէս «մուսան» 1920-ականներէն մինչեւ 1980-ական տարիներուն արտադրուած ֆիլմերուն մասին։ Նշուած է իւրաքանչիւր ֆիլմին արտադրութեան թուականը, արտադրիչ ընկերութիւնը, հեղինակները, բեմադրիչներն ու դերասանները։ Քանի մը տողով ներկայացուած է նաեւ ֆիլմին նիւթը։ Այս բաժինը աւելի եւս հարստացած է լուսանկարներով։

Բաժինին մէջ տուեալ «ֆիլմ» մը գտնելու համար կարելի է փնտռել ըստ տարեթիւի եւ կամ «ըլիք» ընել ֆիլմերու ցուցակին ձեւ փոփոխած ֆիլմին անունին վրայ։

Կայքին մէջ այլ շահեկան բաժին է «Անձնաւորութիւններ» (Personalities)։ Այստեղ տեղեկութիւններ ներկայացուած են հայ բեմադրիչներու, գերասաններու եւ արտադրիչներու մասին։ Նշուած են նաեւ բոլոր ֆիլմերը, որոնք իր մասնակցութիւնը բերած է տուեալ արուեստագէտը։

Գեղեցիկ կառուցող եւ պարունակութեամբ այս կայքը օժտուած է նաեւ փնտռութիւն գրութեամբ, կայքը մեծ դերակատարութիւն կրնայ ունենալ հայկական շարժապատկերը հայերուն եւ օտարներուն ներկայացնելու երախտաշատ աշխատանքին մէջ։

«ՔԼԷՉ» ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԺԱՀՐԸ ՆՈՐԱԳՈՅՆ ՊԱՏՈՒՀԱՍ


Վերջերս համացանցի կարգ մը օգտագործողներ իրենց մահացած բարեկամներէն ե - նամակներ ստացած են, ուրիշներ առանց իրենց գիտութեան բաժանորդագրուած են այլազան «mailing list»-երու, եւ տակաւին ուրիշներ՝ կղերականներէ սեռային նիւթերու մասին ե - նամակներ ստացած են։ Այս բոլորը բնականաբար գերբնական ուժերու միջամտութեամբ չեն կատարուած, այլ համակարգչային նորագոյն ժահրին գործած աւերներուն մէջ չնչին մասը կը կայգին։

Արդարեւ, շուրջ երկու շաբաթ առաջ «Klez» համակարգչային ժահրը սկսաւ տարածուիլ աշխարհով մէջ՝ նիւթական եւ բարոյական վնասներու ենթարկելով բազմաթիւ ընկերութիւններ եւ անհատներ։

Համակարգչային ժահրու «որդ» ընտանիքին պատկանող «Քլէզ»-ը, ինքզինք տեղեկութիւններ տեղադրելու համակարգիչի մը մէջ, կը փնտռէ հոն արձանագրուած ե - նամակի հասցէներ եւ իր կրկնօրինակը ե - նամակի մը կցնելով՝ կ'ուղարկէ այդ հասցէներուն։ Ե - նամակը ստացողները կը կարծեն, թէ իրենց բարեկամը ուղարկած է ե - նամակը եւ կը բանան զայն, արդիւնքը՝ «Քլէզ» ինքզինք կը տեղեկագրէ նաեւ ե - նամակը ստացող անձին համակարգիչին մէջ եւ կը սկսի ե - նամակի հասցէներ փնտռել...

Այսպիսի աշխատելու ձևով «Քլէզ» քանի մը օրուան մէջ տարածուեցաւ աշխարհի բոլոր կողմերը։

«Քլէզ» համակարգչային ժահրին առաջին տարբերակը տարածուիլ սկսաւ 2001ի Հոկտեմբերին։ Կը թուի, թէ ժահրը պատրաստողները տեսարար կը բարեփոխեն ժահրը եւ վերստին կ'արձակեն զայն, տրուած ըլլալով, որ ցարդ «Քլէզ»-ի 6 տարբերակներ տարածուած են համացանցի միջոցով։ Հակառակ այն իրողութեան, որ «Քլէզ»-ի նախորդ տարբերակներուն հակաժահրերը պատրաստուած են, սակայն այդ ժահրերը եւս վերջերս վնաս կը հասցընեն։ Պատճառը այն է, որ «Քլէզ»-ի նորագոյն



տարբերակը, երբ համակարգիչ մը վարակէ, անշարժութեան կը մատնէ անոր հակաժահրային ծրագիրը եւ, հետեւաբար, համակարգիչը դիւրութեամբ թիրախ կը դառնայ այլ ժահրերու։

Նշենք, որ «որդ» ընտանիքին պատկանող ժահրերը՝ «Քլէզ», ինչպէս նաեւ «Լաւ Պակ», «Քուրնիթով» եւ շարք մը այլ ժահրեր, որոնք հրապարակուած են նախորդ քանի մը տարիներուն, լուրջ մարտահրահրուած են հանդիսանան հակաժահրային գրուածներուն։

Արդարեւ, այս կրկնօրինակը ե - նամակի մը կցնելով՝ կ'ուղարկէ այդ հասցէներուն։ Ե - նամակը ստացողները կը կարծեն, թէ իրենց բարեկամը ուղարկած է ե - նամակը եւ կը բանան զայն, արդիւնքը՝ «Քլէզ» ինքզինք կը տեղեկագրէ նաեւ ե - նամակը ստացող անձին համակարգիչին մէջ եւ կը սկսի ե - նամակի հասցէներ փնտռել...

«ՔԼԷՉ»Ը՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՉ

«Արմինֆօ» լրատուական գործակալութիւնը 29 Ապրիլին յայտարարեց, թէ Հայաստանի կեդրոնական Դրամատան եւ «Արմէնթէլ» ընկերութեան համակարգչային գրութիւնները վարակուած են «Քլէզ» ժահրով եւ ենթարկուած են վնասներու։

Լրատուութիւնը կ'աւելցնէ, թէ Ապրիլ 26ին Երևանի մէջ բջիջային հեռաձայններով հարողակցութիւնն ու հեռակալ հեռաձայններու կապերը չեն գործած «Արմէնթէլ»-ի կրած վնասներուն պատճառով։


Սակայն յաջորդող օրերուն հրապարակուած լրատուութիւններ եկան ցոյց տալու, որ «Քլէզ» լուրջ վնասներ չէ գործած Հայաստանի համակարգիչներուն։

Նոյն օրերուն «Կուռնկ» լրատուական գործակալութեան (www.groong.com) ե - նամակի միջոցով ուղարկուած լուրերէն մէկը եւս կը կրէր «Քլէզ» ժահրը։ Բնականաբար ժահրը ուղարկուած չէր «Կուռնկ»-ի կողմէ, այլ արդիւնք էր «Շէքինկ»-ի «Կուռնկ» իր ընթերցողներուն յանձնարարեց չբանալ տուեալ «Փայլ» եւ ջնջել զայն։

Նշենք, որ «Կուռնկ» «attachment»-ի գրութիւնը չ'օգտագործեր եւ, հետեւաբար, «Կուռնկ»-ի անուցով ուղարկուած «attachment» կրող ե - նամակներ պէտք չէ բանալ։

ՀԱՄԱԿԱՐԳԻՉԻՆ ՍԱՐՔ «ՅԼՈՓԻ ՏԻՍՔ»ԵՐԸ՝ ՏԵՂԵԿՈՒԹԵԱՆ ԱՐԱԳԱՏՐԱՐՈՒՄԻ ՄԻՋՈՅ

«Յլոփի տիսք»-ը մէկ համակարգիչէն միւսը տեղեկութիւններ փոխադրելու ամէնէն արագ եւ գործնական միջոցներէն մէկը կը հանդիսանայ։ Թէեւ «Յլոփի տիսք»-ը միջոցով կարելի չէ ձայնային կամ լսատեսողական «ֆայլ»-եր (ինչպէս՝ mp3 ֆայլեր) փոխադրել, սակայն, միւս կողմէ, «Յլոփի տիսք»-ը գրութիւններ, լուսանկարներ եւ համակարգչային կարգ մը ծրագրիչներ փոխադրելու ամէնէն մասշտաբի եւ գործնական սարքը կը հանդիսանան։



«Յլոփի տիսք»-ը պատրաստուած են կերպընկալի նիւթով, որ կը ծածկէ ամբարտուծ յատուկ սկաւառակ մը։

Այս սկաւառակը եւս պատրաստուած է կերպընկալի եւ օժտուած է մագնիսական թրթռացումներ արձանագրելու կարելիութեամբ։ «Յլոփի տիսք»-ը օժտուած են նաեւ շարժուող կախարչի մը։ Երբ «տիսք»-ը տեղադրուի համակարգիչին մէջ, այս կախարչը ետ կը մղուի, որպէսզի սարքը կարենայ «կարգալ» սկաւառակին պարունակութիւնը։ Կարելի է հանդիպիլ տարբեր ձեւեր եւ ամբարտուծ կարելիութիւններ ունեցող «Յլոփի տիսք»-երու։

Այսօր անգործածելի են արդէն 5,25 քառակուսի «իւնչ» չափով «տիսք»-երը, որոնք սկզբնական շրջանին լայն տարածում ունէին եւ կրնային ամբարել 360 «քրիոպայթ» կամ 1,2 «մեկապայթ» տեղեկութիւն։

Այսօր շրջանառութեան մէջ են 3,5 քառակուսի «իւնչ» տարածութեամբ «Յլոփի տիսք»-եր, որոնք կրնան, ըստ իրենց տեսակին, 720 «քրիոպայթ», 1,44 «մեկապայթ» կամ 2,88 «մեկապայթ» տեղեկութիւն ամբարել։ Ասոնցմէ ամէնէն շատ տարածում գտածը 1,44 «մեկապայթ» ամբարտուծ կարելիութեամբ «տիսք»-երն են։

BALTAYAN ELECTRIC

TUNGSRAM
for a brighter world


80% ԵՆԵԿՏՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՆՈՒԱՉ ՄՊԱՌՈՒՄ

ՍՄՈՂՈՒԿԱՆ ԼՍԱԲԵՐԸ 10 ԱՆՉԱՄ ԱՒԵԼԻ ԴԻՍԱՅՈՂ

ԽՆԱՅՈՒԿԱՆ ԵՒ ԵՐԱՍՏԱՏԵԼ ԼՍԱԲԵՐԸ

Ա մասնաճիղ Գործ Համուտ Արմենիա պողոտայ, հեռ. 262901
Բ մասնաճիղ Տորա, հեռ. 261800, 259600

ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՈՐՄԱՉԴԵՐ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԵՒ ԵՒՐՈՊԱՅԻ ՄԷՉ



Հայկական Ցեղասպանութեան նուիրուած որմագրներու մրցանքին լուսագոյն գործերը Ապրիլ 24ին փակցուեցան Ամսթերտամի, Լա Հէյի, Ռոթըրտամի, Լոս Անճելըսի, Թորոնթոյի եւ այլ քաղաքներու մէջ։ Տարբեր գաղափարներու եւ մտայղացումներու արդիւնք այս որմագրներուն գլխաւոր պատգամը մէկ է՝ վառ պահել Հայկական Ցեղասպանութեան յիշողութիւնը եւ միջազգային ճանաչում ապահովել անոր։

Ապրիլ 24ին, զանազան քաղաքներու մէջ փակցուած որմագրներուն, մամուլի եւ հանրութեան արձագանգներուն, ինչպէս նաեւ Ցեղասպանութեան նուիրուած որմագրներուն շարունակուող արշաւին մասին տեղեկութիւններ քաղելու համար այցելել www.armeniangenocideposters.org կայքը։

We Give Services. ... Not Just Policies.

AFHIL

Աֆիլ Շէֆ, Բ Յարկ, Դեռ. Ե Յալու. (01) 262231 242556 242557
Imm. AFED, 2ème étage, Tél. and Fax: (01) 262231 - 242596 - 242597

FOR THE SAKE OF OUR HEALTH AND YOURS DON'T SMOKE

FOR THE SAKE OF OUR NERVES AND YOURS KEEP SILENT

WATCH OUT! BABY ON BOARD

DRIVE SAFELY

ԾԱՆՈՒՅՈՂՆԵՐՈՒ ՌԻՇԱԳՐՈՒԹԵԱՆ

«Ազգակ» մէջ ազգային կամ անտրական ծանուցումներ հրատարակել փափաքողներէն կը խնդրուի ծանուցումին բնագիրը ընթերցի գիրով (հաստատութեան պարագային՝ նախընտրաբար պաշտօնակալ թուղթի վրայ, եւ՝ հաստատուած) Գերկայացնել «Ազգակ» ծանուցումներու գրասենյակը։

Մանկապատանեկան

ՊՁՏԻԿ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՄԵԾ ԳԻՒՏԵՐ

Անոնք կը դիրացնեն մեր առօրեայ կեանքը: Պզտիկ առարկաներ, որոնք մեծ գիւտեր եղած են մարդկութեան համար:



ԳՈՐԳ ՄԱՔՐՈՂ ՄԵՔԵՆԱՆ

Գորգ մաքրող առաջին մեքենան շատ գործնական չէր: Օդ քաշող այս մեքենան կառքով մը կը շրջէր փողոցները: Անոր խողովակը կը մտնէր տուններուն մէջ՝ պատահաններէն անցնելով Բարբախտաբար, 1908 թուականին, փոշիի հանդէպ գերգալանութիւն ունեցող ամերիկացի մը կը հնարէ երկարական մեքենայ մը, փոշեկուլ մը:

պով պատրաստուած կա կ ու ղ օճառներ: 1 7 9 1 թուականին Նիքոլա Լըպլան կը հնարէ քիմիական բաղադրուածքով պատրաստուած օճառներ շինելու:



Այս տարատիպ կ'որդեգրեն ոսկի փնտռողները, ազարակապաններ... Ան Հին Աշխարհ կը հասնի Առաջին Աշխարհամարտէն ետք:


ՏՈՒՐԸ



Այո՛, տուշն ալ գիւտ մը եղած է: Մէրրի Տըրապոսթ կ'աշխատէր բանտի մը մէջ: Բանտարկեալներուն առողջապահական պայմանները բարելաւելու համար 1872 թուականին ան կը հնարէ «տուշ - լոգանքը»:

ԾԻՆՁԸ

1853 թուականին ամերիկացի Օսթրա Լեւի - Սթրաուս գործի համար շատ դիմացկուն տարատ մը կը կարէ... բանական վրաններուն կապոյտ կերպասը գործածելով:



«ՓՈՍԹ - ԻԹ», ՉՍՈՒՆԱԼ

1970 թուականին տաք-թըր Սփինսըր Սիլվըր կը ստեղծէ ինչ մը, որ կը փակցնէ առանց փակցնելու, նոյն ատեն փակցնելով... Տասը տարի ետք Արթըր Տրայ այս ձախողութիւնը յաջողութեան մը կը վերածէ: Ան իր երգարանի էջերուն տեղերը նշանակող պզտիկ թղթիկներուն ծայրը այս խէտէն կը դնէ... Այս ձեւով կը ծնին այդ պզտիկ գունաւոր թուղթերը, զորս մենք կը փակցնենք ամէն տեղ:

ՉԻՓՄԵՐԸ


Շատ բժախնդիր յաճախորդ մը երկու անգամ կը մերժէ իրեն հրամայուած տապակուած գետնախնձորի պնակը՝ ըսելով, թէ անոնք շատ հատուկ են:

Խոհանոցի պատասխանատուն՝ Ճորճ Քրամ շատ գոհ չի մնար այս պատահարէն: Ան կ'որոշէ կրցածին չափ գետնախնձորի բարակ շերտեր կտրել: Քանի մը վայրկեան տապակող ձեթին մէջ, քիչ մը աղ, եւ շիփսեր կը ծնին: Ասիական կը պատահի 1953 թուականին...

ԻՆՉՈՒՒ

ԻՆՉՈՒՒ ԿԱՐԳ ՄԸ ԲՈՅՍԵՐ ՓՈՒՇԵՐ ՈՒՆԻՆ

Բոյսերը փոշեր չունին պարզապէս ոտքերը ճանկելու համար, երբ բնութեան մէջ կը պտտուի: Անոնք բոյսին համար կենսական են եւ անոր կարելիութիւնը կու տան իր միջավայրին վարժուելու:




- 1) ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ԿԱՐԳ**
Անոնք ժանտափուշին օրինակը: Փուշերով օտտուած տերեւներուն, կոթին եւ ծաղիկներուն պատճառով բուսակեր անասունները ժանտափուշ չեն ուտեր: Նոյն ձեւով, դուն ալ երբ ծաղիկ կ'ուզես քաղել, կը խուսափես փուշ ունեցող ծաղիկներէն:
- 2.- ԱՆՏԵՆ ԳԻՒՏԵՐԻ ԿԱՐԳ**
Վայրի վարդենիին պարագային, անոր ճիւղերը ունին պզտիկ ճանկերու նման փուշեր: Այս ձեւով, բոյսը կրնայ կառչել իր դրացի բոյսերուն եւ կը մագլցի դէպի լոյս... Ան պէտք չունի հաստ կոթեր կազմելու:
- 3.- ՉՈՐՈՒԹԵԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ԿԱՐԳ**
Բոյսերը կը քրտնին իրենց տերեւներուն միջոցով: Որքան տերեւը մեծ ըլլայ, այնքան տերեւը կը քրտնի: Անջրդի շրջաններուն մէջ տերեւներուն փոխարէն փուշեր կ'աճին: Բոյսը նուազ կը քրտնի եւ իր ջուրը կը խնայէ:
- 4.- ԿԱՐԵՆԱԼ ԿԵՐԱՊՐԵԼՈՒ ԿԱՐԳ**
Անպատաններուն մէջ ցօղը կը հաւաքուի բոյսերու փուշերուն վրայ: Այս ձեւով, բոյսերը կը ծծեն ապրելու համար կենսական այս ջուրը:

ԻՆՉՈՒՒ ՍԱՐԳԸ ԻՐ ՈՍՏԱՅՆԻՆ ՄԵՋ ՉԻ ԲԱՆՏԱՐԿՈՒԻՐ

Որովհետեւ սարգը շատ լաւ կազմակերպուած է: Իր թակարդին մէջ չիլինայու համար ան երբեք կարելի չէ տերեւ ուշադրութիւն կ'ընէ: Անոր 8 ոտքերը հազու կը դաշին ոստայնին, երբ ան կը տեղափոխուի: ան կը քալէ իր ոտքերուն ծայրը գտնուող երեք պզտիկ ճանկերուն ծայրերուն վրայ: Ան նաեւ սկիզբէն լորձուցով կը ծածկէ ոտքերուն այն բաժինները, որոնք կրնան ոստայնին դաշիլ: Այս լորձուցը տապակին յատակը քուտած ձեթի խաւին նման է, անոր շնորհիւ սարգը չի փակիր իր ոստայնին թելերուն: Ամէնէն կարեւոր կէտը տեղի կ'ունենայ թակարդին պատրաստութեան ընթացքին: Սարգը երկու հանգրուանով կ'աշխատի՝ տարբեր որակի թելերով: Առաջին հանգրուանին ան կը պարզէ չփակող թել մը՝ իր ոստայնին կամիւքը շինելու համար, ապա ան կ'աշխատէ թել մը կ'աւելցնէ իր որսերը բռնելու համար: Թակարդը պատրաստ է:

ՉԵՈՒՅԻՆ ԱՇԽԱՏԱՆԸ

Ո՞ՒՐ ԴՆԵՄ ԹՂԹԻԿՆԵՐԱ...




Գրպանի մէջ ունիս կարեւոր թղթիկներ, պզտիկ առարկաներ, զորս չես ուզող կորսնցնել:

Պէտք ունիս թելի կտորի մը եւ լաթակալներու: Լաթակալները ներկերով գունաւորէ եւ գանոնք գործածէ թղթիկները, պզտիկ նկարները կամ սիրած առարկաները թելին վրայ կախելու համար: Կրնաս նաեւ լաթակալներուն վրայ գիրք փակցնել՝ ըստ կախելիք առարկաներու, օրինակ՝ «Ը» ընկերուհի, «Ծ» - ծաղիկ, «Բ» - բանալի... Այս ձեւով, քեզի համար այս բոլոր կարեւոր թուղթերը եւ առարկաները միշտ աչքիդ առջեւ պիտի գտնուին:

Ժ Ա Մ Ա Ն Յ




Կրնա՞ս գտնել 2 պատկերներուն միջեւ գոյութիւն ունեցող 6 տարբերութիւններ:



Կրնա՞ս գտնել իւրաքանչիւր պատկերին մէջ պակասող առարկան:



Կրնա՞ս գտնել պզտիկներուն եւ իրենց շուքին միջեւ գոյութիւն ունեցող 5 տարբերութիւններ:



Ո՞ր պատկերը աւելի կրկնուած է, ա՞ստղը, թէ կլորակը:

Պատրաստեց՝ ՇՈՂԻԿ ՏԵՐ ՂՈՒԿԱՍԵԱՆ

ԳԻՏԵՒՐ ԹԵ

ԱՆՋՐՊԵՏԸ ՔԱՆԻՐ ՏԱՐԵԿԱՆ Է

1929 թուականին Հապրլ աստղագէտը փաստեց, թէ անջրպետը կը ծաւալի եւ այս ծաւալումին արագութիւնը մեզի կարելիութիւնը կու տայ անոր տարիքը չափելու:

Եթէ աստղագետը մը հեռացումին արագութիւնը համեմատական է իր հեռաւորութեան հետ, հետեւաբար կարելի է անոր տարիքը որոշել ըստ անոր հեռանալու արագութեան:

Ներկայիս գիտնականները կ'ենթադրեն, որ մեր անջրպետը 7 - 20 միլիարտ տարեկան է:

ՆՈՒՒՐԱԿԱՆ ՈՒՏԵԼԻՔՆԵՐ՝ ՀԱՅՐԵԻ ԶԵԹԸ


Հացը եւ ձէթը մեծ դեր խաղացած են մարդկութեան պատմութեան ամէնէն կարեւոր դէպքերէն մէկուն՝ մարդ արարածին նստակեաց դառնալուն մէջ:

Մարդ արարածը նախ կը տեսնէ կարելիութիւնը հացահատիկներ մշակելու, եւ հետագային, ան կը սորվի այս բոյսերը ուտելիքի վերածել: Այս ձեւով, հացահատիկներու հատիկները վերածուցան հացի եւ ձիթի ստեղծումը՝ ձեռնարկուի:

Այս նիւթերը առաջին անգամ յառաջացան Միլերկերական ծովուն հեռաւոր արեւելեան շրջանին մէջ: Կարգ մը շրջաններու մէջ հացը եւ ձէթը դարձան նաեւ առասպելական եւ կրօնական խորհրդանշաններ:

«ԱԶԳԱԿ»
ՀԵՌԱԶԱՅՆԻ ԹԻՒՒՐԸ
«ԱԶԳԱԿ»-ի հետ կապուելու համար հեռագրային հետեւեալ թիւերուն.- 258526, 260115 եւ 241274:

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն - Ա Շ Խ Ա Ր Կ



ՊԱՏԵԹՊՈՒ

Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՂԶԿԱՆՑ ԽՈՒՄԲԸ՝ ՍՈՒՐԻՈՅ ԱԽՈՅԵԱՆ

Երեկ աւարտեցաւ պատերազմի Սուրիոյ աղջըկանց Ա. դասակարգի ախոյեանութիւնը: Հ.Մ.Ը.Մ.Ի հնգեակը հանդիսացաւ ախոյեան, մեծ ուրախութիւն պատճառելով գաղութի հալութեան: Հ.Մ.Ը.Մ.Ի աղջիկները իրենց 10 մրցումներուն ընթացքին արձանագրած են 9 յաղթանակ, ինչ որ կ'ապացուցէ անոնց գերակայութիւնը բոլորին:

Կ'ողջունենք ու կը շնորհաւորենք Հ.Մ.Ը.Մ.Ի մեր աղջիկները, անոնց մաղթելով նոր յաջողութիւններ եւ աւելի բարձր նուաճումներ, ինչպէս նաեւ այլ մարզաձեւերու մէջ տղոց թէ աղջըկանց խումբերուն համար փայլուն արդիւնքներ:

ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԵՐՈՊԱՅԻ ՏԱՐԱԾԵՐԻՆ

Շարաթափերջին, եւրոպայի կարգ մը երկիրներու մէջ՝ Իտալիա, Ֆրանսա եւ Գերմանիա, կ'աւարտին Ա. դասակարգի ախոյեանութեան մրցումները: Սպանիոյ մէջ տեղի կ'ունենան 37րդ եւ նախափերջին հանգրուանի մրցումները, իսկ Անգլիոյ մէջ ախոյեանութեան մրցումներ տեղի պիտի չունենան, այլ՝ բաժակի մրցաշարքին աւարտականի մրցումը՝ Արսենալի եւ Չելսիի միջեւ: Նոյնն է պարագան նաեւ Սկոտլանդ, ուր տեղի կ'ունենայ Սկոտլանդի բաժակի մրցաշարքին աւարտականի մրցումը՝ Սելթիքի եւ Ռէյնջերսի միջեւ:

Ջի մրցումներուն յայտագիրները (ժամերը՝ Պէյ-րուժի ժամով):

ԵՐՈՊԱՅԻ ՏԱՐԱԾԵՐԻՆ

ԵՐՈՊԱՅԻ
(ժամը 16:00ից)
ՎԱՂՐ
Պրեշիա - Պոլոնիա
Բիելո Վերոնա - Արալանքա
Լացիո Ռոմա - Ինթեր Միլան
Ա. Սէ. Միլան - Լէչէ
Փարմա - Վենեցիա
Փերուցիա - Ֆիորենցիան
Փիաչենցա - Վերոնա
Թորինո - Ա. Էս. Ռոմա
Ուտինգեթ - Եուվեթթուս

Լիլ - Փարիզ Ս. Ժ. Նանթ - Պորտո
Կեյլկան - Թրուա
Սոչո - Մոնպո
Մարսէյ - Մոնպելիէ
Սրտան - Պասթիա
Մէս - Լորիան

ՊՈՒՆՏՆԱԿԱՆ

(ժամը 16:30ից)
ԱՅՍՕՐ
Պ. Մեօնշընկլատպախ - 1860 Միւնիխ
Շալքէ - Վոլֆսպուրկ
Պայեր Լեյքըրդըն - Հերթա Պերլին
Ջանքթ Գաուլի - Նիւրնբերկ
Պորուսխա Տորֆուտ - Վերտըր Պրեմըն
Ֆրայպուրկ - Համպուրկ
Բորպուս - Բեօլն
Շերուկարթ - Բայեր Միւնխեն
Պայեր Միւնխեն - Հանգա Ռոսթր

ՖՐԱՆՍԱ

(ժամը 21:00ից)
ԱՅՍՕՐ
Լիոն - Լանս
Օքսէն - Ռենն

ԵՐՈՊԱՅԻ

Պարագուէի դիրքը գրաւող Ինթեր Միլան, 13 տարուան իր սպասումին վերջ մը կը դնէ, եթէ յաջողի յաղթական վերադառնալ Լացիո Ռոմայի դաշտէն, ինչ որ այ ըլլան Ուտինգեթ - Եուվեթթուս եւ Թորինո - Ա. Էս. Ռոմա մրցումներուն արդիւնքները:
Ինթեր մէկ կէտի առաւելութիւն ունի Եուվեթթուսի վրայ (2րդ), իսկ երկու կէտի առաւելութիւն՝ Ա. Էս. Ռոմայի վրայ (3րդ):

ՖՐԱՆՍԱ

Պարագուէի դիրքը գրաւող Լանս, որ մէկ կէտի առաւելութիւն ունի Եուվեթթուսի վրայ, տիտղոսին տիրանալու համար պէտք է նուազագոյնը հաւասարութեամբ հետնայ նոյնինքն Լիոնի դաշտէն: Պարտութեան մը պարագային, դաշտին տէրերը կը հանդիսանան ախոյեան:

ՊՈՒՆՏՆԱԿԱՆ

Նշենք, թէ Ֆրանսայի ֆուտբոլի Ա. դասակարգի ախոյեանութեան մէջ առաջին անգամն է, որ վերջին հանգրուանին պիտի վճռուի ախոյեանին ճակատագիրը:

ՊՈՒՆՏՆԱԿԱՆ

34րդ հանգրուանի մրցումներուն, պարագուէի դիրքը գրաւող Պորուսիա Տորֆուտն Վեցերթը անգամ ըլլալով կ'արժանանայ տիտղոսին, անշուշտ եթէ յաջողի իր դաշտին վրայ պարտութեան մատնել Վերտըր Պրեմընը (6րդ): Անկախ մէկ կէտի առաւելութիւն ունի Պայեր Լեյքըրդընի վրայ (2րդ), իսկ երկու կէտի առաւելութիւն՝ Պայեր Միւնխենի վրայ (3րդ):

ՍՊԱՆԻԱ

37րդ եւ նախափերջին հանգրուանի մրցումներուն, պարագուէի դիրքը գրաւող Վալենսիա եթէ յաջողի յաղթանակ մը արձանագրել, կը տիրանայ տիտղոսին, 31 տարուան երկար սպասումէ ետք: Վալենսիա, որ հիւրը պիտի ըլլայ Մալաչայի (8րդ), չորս կէտի առաւելութիւն ունի 2րդ դիրքը գրաւող Ռէալ Մատրիտի վրայ:

Ստորեւ՝ շարաթափեր՝

Sidon Travel & Tourism Ltd.

ARMENIA BUILDING, BOURJ HAMMOUD, LEBANON
TEL: 01-261887, FAX: 01-263411

ԼՕԽԻ «ՆԱՅԻՐԻ» ՄԱՍՆԱԾԻՂԻ

ՄԱՍՆԱԾԻՂԻ ՀԻՄՆԱԳՐՈՒԹԵԱՆ 40ԱՄԵԱԿ ԵՒ ՄԱՅՐԵՐՈՒ ՕՐՈՒԱՅ ՀԱՆԳԻՍՈՒԹԻՒՆ

Շովանաւորութեամբ՝
ԼՕԽԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Նախագահութեամբ՝
ԸՆԿԵՐՈՒԹԻ ԱՆԺԷ ԱՄՊՈՒՆՃԵԱՆԻ

Կազմակերպութեամբ՝
ԼՕԽԻ «ՆԱՅԻՐԻ» ՄԱՍՆԱԾԻՂԻ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Տեղի կ'ունենայ Չորեքշաբթի, 8 Մայիս 2002ին, առաւօտեան ժամը 10:00էն սկսեալ Hotel Monroehի շքեղ սրահին մէջ:

ՄԱՆՈՒԿԵԱՆ ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ՎԱՅԷ ԵՒ ԹԱՍԱՐ ՄԱՆՈՒԿԵԱՆ Համալսարանական Կրթաթոշակ 2002-2003 Տարեշրջան

- Մանուկեան Բարեսիրական Հիմնարկութեան Վաչէ Եւ Թամար Մանուկեան Համալսարանական Կրթաթոշակի յատկացումներու բաժանումը՝ 2002-2003 ուսումնական տարեշրջանին համար պիտի յատկացնէ որոշ թիւով կրթաթոշակներ նախկին եւ նոր արժանաւոր ուսանողներու եւ թեկնածուներու:
- Հիմնարկութեան ծրագիրը կը վերաբերի միմիայն այն ուսանողներուն, որոնք համալսարանական լրիւ մակարդակ ունեցող ուսումնասիրական հաստատութիւն մը պիտի յաճախեն կանոնաւոր կերպով:
- Թեկնածուները պարտին ունենալ ուսումնական բարձր մակարդակ եւ ընդունուած ըլլալ նուազագոյնը Sophomore դասարանը՝ ամերիկեան համալսարաններուն մէջ, կամ համապատասխան դասարան մը՝ այլ համալսարաններու պարագային:
- Մանուկեան Համալսարանական կրթաթոշակ ստացող բոլոր նախկին ուսանողները, ինչպէս նաեւ նոր թեկնածուները պարտին ներկայանալ հիմնարկութեան գրասենեակը՝ 15 Ապրիլէն 20 Մայիս (բացի Շաբաթ օրերէն), կէսօրուան ժամը 12:00էն մինչեւ կէսօր ետք ժամը 5:00, ստորեւ յիշուած հասցեին, ստանալու համար կրթաթոշակի դիմումագիրը:
ՀԱՍՅԷ. ԺԷԼ ԵՒ ՏԻՍ ԻՐԱՎԱՐԱԿ, «ՄԱՂԼԻ»
Սենթըր, 5րդ յարկ, հեռաձայն՝ 04-713532:

ՍՐՔՈՅ ՀՈՒՓՈՍԻՄԵԱՆՑ ՎԱՐԺԱՐԱՆ

Տնօրէնութիւնս կը յայտարարէ, թէ սկսած են 2002-2003 դպրոցական տարեշրջանի արձանագրութիւնները, 6 Մայիս 2002էն սկսեալ, ամէն օր առաւօտեան ժամը 8:00էն 14:00, բացի Շաբաթ եւ Կիրակի օրերէն:

Դիւրացնելու համար վերամուտի գրասենեակի աշխատանքները՝ արձանագրութիւնը պարտադիր է ներկայ աշակերտութեան:

Հայ պալին տունն է հայ դպրոցը, ուր մօրը կաթին նման, ան կը սնանի հայ ոգիով, կը ստանայ աւիշը իր հայեցի պատկանելիութեան եւ կը դառնայ չորս լեզուներով վարձագաց, ապագայի օգտաշատ հայ, քրիստոնէայ, տիպար քաղաքացին:

Նորեկ աշակերտները պարտին իրենց հետ բերել ինքնուրուի թուղթի լուսապատճէն կամ ինքնուրուի, մկրտութեան վաւերագիր, պատուաստներու եւ առողջ վիճակի վկայագիր եւ 4 լուսանկար:

2002-2003 տարեշրջանին կը մատակարարուի նախաձեռն եւ ճաշ, վարձարանին կողմէ:

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

ՀԱՍԱԶԳԱՅԻՆԻ ՊԱՐԱՐՈՒԵՍԻ ՄԻԱՒՈՐ ՄԻՋԴՊՐՈՑԱԿԱՆ ՊԱՐԻ ՓԱՌԱՏՕՆ

Մասնակցութեամբ՝
ԼԻԲԱՆԱՆԱՐԱՅ ՎԱՐՃԱՐԱՆՆԵՐՈՒ

Տեղի կ'ունենայ Շաբաթ, 4 Մայիս 2002ին, կեսօր ետք ժամը 4:00ին, 3ակոբ Տր Մելքոնեան բաւտրարահին մէջ:

•Տոմսեր ստանալ ելոյթի օրը կիշէն:

ԱՆՈՒՇԱՎԱՃԱՌ ՍԱՐԳԻՍ

Խրախմանքի չեր սեղանները
ճիւղացուցէք
համեղ անուշեղէններով

ԱՐԱԷՍ ՓՈՂՈՑ
ՊՈՒՐՃ ՀԱՍՈՒՏ ՀԵՌ. 261475

ՏԱՐԵՂԱՐՁԻ ԼԱԽԱԳՈՅՆ ՆՈՒԵՐ

VIDEOԻ ԿԱՍ ԸՈՒ ՎՐԱՅ
VIDEO CLIPՆԵՐ
ԱՆՁԻՆ ԱՆՈՒՆՈՎ ԵՒ ՄԱԿԱՆՈՒՆՈՎ

Դիմել՝ ԱՐԱ ԶԵԶԵԱՆ ՀԱՍ.
Հեռ. 01 / 261696, 03 / 250518

ՄԱՍՈՒԼԻ ՏԱԿ Է ԵՒ ԵՐՐՈՐԴ ՏԳՎԱԳՐՈՒԹԵԱՄԲ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՆԷ

Վաստակաւոր բառարանագիր
ՄԵՍՐՈՂ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԻ

ԱՆԳԼԵՐԷՆ - ՀԱՅԵՐԷՆ ՀԱՅԵՐԷՆ - ԱՆԳԼԵՐԷՆ

ԳՐԱՆԻ ՄԻԱՅԵԱԼ ՆՈՐ ԲԱՌԱՐԱՆԸ
(կարելոյնով անգլերէն բառերուն հնչումը)

Այժմէականացուց՝ ԼԵՒՈՆ ԹՈՐՈՍԵԱՆ
1700 նորագոյն բառերու յաւելումով

Սոյն բառարանին վերաւորութեան կետեղած ենք
1) Անգլերէնի մէջ գործածական համառոտագրութիւնները (Customary abbreviations)
2) Անգլերէնի մէջ գործածուած օտար բառեր:

ՇԻՐԱԿ ՀՐԱՍԱՐԱԿԱՅԻՆ
Tel. 01/ 253008 Fax 01/ 253 009 E-mail: chirak@dm.net.lb

ԿԻՍՍԱՐԿԱԿԱՅ ԵՒ ԴՊՐԱՅ ԶԵՆՆԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՆԹԻԼԵԱՍԻ ՄԷՉ

Ուրախութեամբ կը յայտարարենք մեր հաւատացեալ ժողովուրդին, որ յառաջիկայ Կիրակի, 5 Մայիս 2002ին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ յընթացս Ս. պատարագի տեղի պիտի ունենայ դպրեվանքի սաներու Դպրաց եւ Կիսասարկաւագաց ձեռնադրութիւնը:

Ձեռնադրութիւնը պիտի կատարէ, պատարագէ եւ քարոյէ՝

ԳԵՐՇ. Տ. ՎԱՐԿԱՆ ԱՐԸ. ՏԵՄԻՐՃԵԱՆ

Սրարողութեանց պիտի հանդիսացնէ՝
Ն. Ս. Օ. Տ. Ս. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Սկիզբ ժամերգութեան՝ ժամը 8:00ին
Ս. պատարագ՝ ժամը 10:00ին
Սիրով կը հրաւիրուի հաւատացեալ ժողովուրդը իր ներկայութեամբ քաջալեր հանդիսանալու մեր սաներուն ծառայական կեանքի այս կարեւոր հանգրուանին:

ԴԻԻԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ

ՊԵՐԷՃԻԿԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Սոյն յայտարարութեամբ վարչութիւնս կը հրաւիրէ իր հայրենակիցները՝ Ընդհանուր Ժողովի, միութեան տան սրահին մէջ, Կիրակի, 26 Մայիս 2002ի առաւօտեան ժամը 10:00ին: Ժամը 11:00ին ներկայներու թիւը պիտի նկատուի մեծամասնութիւն: Օրակարգի վրայ է վարչական ընտրութիւնը: ԵԱՆՕԹ. Այն հայրենակիցները, որոնք կը փափաքին ներկայացնել իրենց թեկնածութիւնը, պարտին գրաւոր դիմումագիր ներկայացնել վարչութեան, ամենէն ուշը՝ ընտրութեան թուականէն 72 ժամ առաջ:

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՃԱՏՐԱԿ

1) ՍԵՒԵՐԸ ԿԸ ԽԱՂԱՆ ԵՒ ՄԱԹ 2 ԵՍՐԺՈՒՄՈՎ

ԼՈՒՆՏ Ֆ. - ՇԺԼՄ Ն. (2002)

2) ՍԵՒԵՐԸ ԿԸ ԽԱՂԱՆ ԵՒ ՄԱԹ 2 ԵՍՐԺՈՒՄՈՎ

ՏԱՄԲԸՐ Ա. ՌՈՒԹԱԿԻՆ Ժ. (2002)

3) ՍԵՒԵՐԸ ԿԸ ԽԱՂԱՆ ԵՒ ՄԱԹ 2 ԵՍՐԺՈՒՄՈՎ

ՆԱԿԱԳԻ Ս. - ՉԱՂԱՆԻ Ի. (2002)

4) ՃԵՐՄԱԿԵՐԸ ԿԸ ԽԱՂԱՆ ԵՒ ՄԱԹ 2 ԵՍՐԺՈՒՄՈՎ

ՓԱՆԸՐԱԹԻԿ (2002)

Խնդիրներուն լուծումը տեսնել՝ 10րդ էջ

Այս սիւնակը պատրաստեց՝ Էլի Հոլիշեան

